№ 172 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՕԳՈՍՏՈՍԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՕԳՈՍՏՈՍԻ № 172

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Օգոստոսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 5 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս ապրող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Вѣдомство учрежденій Императрицы Маріи.

Նոր-Նախիջեւանի Գոգոյեան Օրիորդաց Գիմնազիայի Հոգաբարձութիւնը

յայտնում է, որ ընդունելութեան քննութիւնները ստորին, բարձր նախակրթարանները և VII, VI, V, IV, III և II դասարանները մտնելու համար

ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՑ:

Գիմնազիան հեռաւորների համար ունի նաև օթեան (пансіонъ) բոլոր յարմարութիւններով։

Տարեկան վարձն է՝ 50 ր., իսկ գիշերօթիկներից—առաջին տարին՝ 350 ր., միւս տարիները՝ 300 ր.։

Խնդիրներ ընդունվում են մինչև օգոստոսի 21-ը։

առ. (14, 18) 771. 3—1

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՆԹԱՇԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Խնդիրների ընդունելութիւնը նոր շինութեան մէջ (Բէհբութեան փող. № 50) օգոստոսի 20-ից առ. ժամը 9—1-ը:

Դասարանական քննութիւնները օգոստոսի 31-ից:

Ընդունելութեան քննութիւնները սեպտեմբերի 5-ից:

առ. (12, 14) 773. 3—1

ՉԱՂԱՆԱԼՈՒ ԴԷՄ

Բժիշկները առաջարկում են Դ-ր Դէշանի փայլուն հետեւանքներ ունեցող Եօղիբինը՝ որպէս հիանալի միջոց չաղանալու դէմ։ Դ-ր Դէշանի Եօղիբինը կարճ ժամանակի ընթացքում աստիճանաբար նուազեցնում է չաղութիւնը։ Նրա աջող ներգործութիւնը նկատվում է հէնց բժշկութեան սկզբից։ Եօղիբինը միանգամայն անվնաս է օրգանիզմի համար։ Ծախվում է դեղատներում և դեղատնային խանութներում արկղիկը 4 րուբլի 25 կոպէկով։

(10) առ. (B. 19328) 245. 6—6

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ռուս-գերմանական համաձայնութիւնը, որի հետ մեր ընթերցողները ծանօթացան «Մշակի» երէկվայ համարից, վերաբերում է երկու երկաթուղային ցանցերի միացմանը։

Այդ ցանցերից մէկն է Հիւսիսային-Պարսկաստանում կառուցվելիք երկաթուղիների ցանցը, միւսը՝ Եփրատի հովտում Բաղդադի շրջանով անցնելիք երկաթուղու ցանցը։

Առաջին ցանցը գտնվում է Պարսկաստանի այն մասում, որը համարվում է ռուսական ազդեցութեան շրջան, երկրորդը կազմում է գերմանական նախաձեռնողների արտօնութիւնը։

Երկու ցանցերը միմեանց հետ կապելով հիմք է դրվում խոշոր տնտեսական ծրագիրների իրագործութեան, և պայմանաւորվող պետութիւններից իւրաքանչիւրը սպասում է օգուտներ իր համար։

Ահա այդ սպասելիք օգուտների վերաբերութեամբ տարբերվում են մարդկանց կարծիքները։

Կայ մի տարածված կարծիք, որ երկաթուղային ցանցերի այդ միացումից գլխաւորապէս կօգտվի Գերմանիան և որ ռուսական շահերը կարող են մի որոշ չափով վնասված լինել։

Այդ կարծիքի պաշտպանները ընդգծում են, թէ Գերմանիան, ուղարկելով իր ապրանքները Բաղդադի երկաթուղով դէպի Պարսկաստան և այնտեղ առաջացնելով անխնայ մրցում ռուսական ապրանքների դէմ, յետ կը մղէ վերջինները առևտրական ասպարէզից։ Եւ ուրեմն Մոսկվայի և Լօձի ապրանքները, որոնք այժմ մեծ քանակութեամբ մուտք են գործում Պարսկաստանի մէջ, այն ժամանակ կը կորցնեն իրանց ներկայ վաճառանոցները։

Այդ կարծիքի մէջ կայ որոշ աստիճան հիմնաւորութիւն, բայց նա ամփոփում է գալիք դէպքերի միայն մի մասը։ Եթէ ռուսական արդիւնագործութեան մի քանի ճիւղերը ժամանակաւորապէս կը վնասվեն, դրա փոխարէն կառաջանան միւսները և վերջ ի վերջոյ կընդարձակվի և կը զարգանայ մթերքների համաշխարհային փոխանակութիւնը, որը կը բանայ իւրաքանչիւր պետութեան հարստութեան նոր շաւիղներ արդիւնագործութեան և առևտրի մէջ։

Յատկապէս Կովկասի համար հաղորդակցութեան այդպիսի ճիւղաւորութիւնները և ընդարձակումները կը լինեն օգտակար և նպաստաւոր։ Կովկասը, դիւրացնելով իր յարաբերութիւնները շրջակայ երկիրների հետ և կապվելով համաշխարհային մեծ վաճառանոցների հետ, կը զարգացնի իր բնական ույժերը և հարստութիւնները արդիւնաբերութեան այնպիսի ասպարէզի վրա, որը թելադրում է նրան իր գրաւած դիրքը, Եւրօպայի և Ասիայի երթևեկութեան հանգոյցում։

Անշուշտ, երկաթուղային ցանցերը լայնածաւալ գործունէութիւն կառաջացնեն, երբ նրանք կապված կը լինեն հարաւում այն գծերի հետ, որոնք կը գնան դէպի Հնդկաստանի խորքերը և ծովեզրները։ Այդ գծերի մասին արդէն խօսում են, իբրև առաջիկայում իրագործվելի ծրագիրների մասին։

Եւ մենք շատ շուտով կը տեսնէինք նրանց իրագործումը, եթէ դա պահանջում չը լինէր չափազանց խոշոր գումարների գործադրութիւն։

Այդ դրամագլուխները պէտք է գտնել և նրանց խմբել խոշոր ձեռնարկութիւններ մարմնացնելու համար։

Ա. Քալանթար

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 օգոստոսի

Լոնդոն.—Միայն «Դէյլի-Գրաֆիկն» է քննում ռուս-գերմանական համաձայնութիւնը։ Գերմանիան իրաւ է, լրագրի կարծիքով, որ համաձայնութիւնը իր դիպլօմատիայի յաղթութիւնն է համարում, վասն զի Ռուսաստանը մեկուսացված է այն պետութիւններից, որոնք դէմ են Բաղդադի երկաթուղու կառուցմանը. համաձայնութիւնը ապահովում է Գերմանիայի Հիւսիսային Պարսկաստանում Ռուսաստանի հետ կապած պայմանագրական իրաւունքների շրջանում աւելի նպաստաւոր դրութիւն, քան Անգլիայինն է։

Բերլին.—Քննելով ռուս-գերմանական համաձայնութիւնը, «Դեօյչէ-Տագէս-Ցայտունգը» մատնանշում է, որ նրա մասին պետական կանցլէրը ոչինչ չէր յայտնել պոտսդամեան տեսակցութիւնից յետոյ և որ երկու բարեկամ պետութիւնները խոստացել են չը մասնակցել որևէ թշնամական կոմբինացիայի մէջ, որ ուղղված կը լինի նրանցից մէկի դէմ։ Այդ պատճառով համաձայնութիւնը ի տես չունի նոր որոշումներ ռուս-գերմանական յարաբերութիւնների մասին, այլ հանդիսանում է սոսկ յատուկ համաձայնութիւն պարսկական հարցի առիթով։ Պետական կանցլէրի յայտարարութիւնը կը մնայ իր ույժի մէջ։

«Մորգէն-Պօստը» ասում է. «Անգլիական հաշիւներից երկար ժամանակով վերացվում են ռուս-գերմանական տարաձայնութիւնները Միջին Արևելքում։ Ֆրանսիան և Անգլիան խաբվեցին հաշւի մէջ, յուսալով թէ Ռուսաստանը մարոկկեան անկարգութիւնների ժամանակ հանդէս կը գայ ընդդէմ Գերմանիայի»։

Վիեննա.—Լրագիրները մանրամասն քննում են ռուս-գերմանական համաձայնութիւնը, գտնում են, որ Գերմանիան Ռուսաստանին մեծ զիջումներ է արել, կարծում են, թէ պայմանագիրը հաստատում է լաւ յարաբերութիւններ Գերմանիայի և Ռուսաստանի միջև, որովհետև շնորհիւ նրա իր սուր կերպարանքը կորցնում է այն հակառակութիւնը, որ բաժանում է մեծ պետութիւնների երկու խմբակցութիւնները, յոյս են տածում, թէ նման համաձայնութիւն կը կապվի Գերմանիայի և Անգլիայի միջև, ընդգծում են գերմանական դիպլօմատիայի խոշոր աջողութիւնը, ենթադրութիւններ են անում, թէ Ֆրանսիան խէթ աչքով կը նայէ համաձայնութեան վրա և կչտամբանքներ կուղղէ Ռուսաստանի հասցէին, որ սա ապերախտ գտնվեց։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 օգոստոսի

Պետերբուրգ.—Ի լրումն Կայսրի խօսքերի պէտք է աւելացնել. «Յարգանքով վերաբերվեցէք դէպի ձեր իշխանաւորները եւ առանց քննադատութեան մէկը միւսին ընկերավարի, յիշելով որ դուք ամենքդ կազմում էք ռուսական մեծ զօրքի ընտանիքի մի մասնիկը»։

Վիեննա.—Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, Միլօվանովիչը Պետր Թագաւորի Պետերբուրգ այցելելուց յետոյ այցելելու է Վիեննա, որպէսզի բանակցէ սերբիական Թագաւորի Աւստրիայի մայրաքաղաքը այցելելու մասին։

Հռոմ.—Պապի առողջութիւնը վերականգնվում է։ Վաղը նա կը վերսկսէ գրօսնել։

Պարիզ.—Եկաւ Կամբօնը։

Լոնդոն.—Քարածխային հանքերում պայթումից Եօրկ կոմսութեան մէջ սպանվեցին երեք հոգի։

Սէրաէվօ.—Բանակցութիւններ սկըսվեցին պատրիարքի հետ Բօսնիայի և Հերցեգովինայի ուղղափառ եկեղեցու գործերի վարչութեան առիթով սերբ-ուղղափառ եկեղեցին միացեալ նահանգներում Կ. Պոլսի պատրիարքարանից անջատելու մասին։ Սէրաէվօյում առանձին պատրիարքութիւն հաստատելու հարցը չէ շօշափվում։

Պարիզ. — Զինուորական մինիստրը Տրէվում խնճոյքին արտասանած ճառում յայտնեց, թէ նրա նպատակը առանձնապէս ծանր է կատարվող դէպքերի պատճառով. մինիստրը պէտք է երկրին ներշնչէ լիակատար հաւատ իր վիճակի և ույժի. «Մենք,—ասաց մինիստրը,—խաղաղասէր ազգ ենք, սակայն մենք պարծենում ենք մեր փառաւոր անցեալով և մտադիր չենք հրաժարվել մեր և ոչ մի փառաւոր տրադիցիայից։ Այն վստահութիւնը, որպիսին մենք տածում ենք դէպի երկրի ապագան, չէ քչանում ոչ ներկայիս իրականութեամբ, ոչ ապագայի հնարաւոր պատահականութիւններից»։

Խանկօու.—Բացվում է անգօ-ամերիկական համալսարան չինացիների համար։ Դրամագլուխը երեք միլիոն լան է։

Նովօչերկասկ.—Երկամեայ վէճը պօլիտեխնիկումի կառուցման տեղի մասին լուծվեց նպաստաւոր կերպով քաղաքացիների մեծամասնութեան համար։ Պօլիտեխնիկումը կը կառուցվի քաղաքի կենտրոնում։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 օգոստոսի

Լոնդոն. — Րէյտէրը հաղորդում է Թէհրանից, որ անգլիական առաջադրութիւնների մէջ յայտարարված է, թէ շնորհիւ Ռուսաստանի առարկութիւններին Անգլիան չէ կարող ընդունել Ստօկսի հրաժարականը և առաջարկում է Պարսկաստանին ծառայութեան հրաւիրել երկրորդական պետութեան հպատակ մի օֆիցէրի։ Ռուսաց դեսպանը առաջադրութիւն արեց այն մտքով, որ եթէ պարսից կառավարութիւնը կը պնդէ Ստօկսին նշանակելու վրա, այն ժամանակ Ռուսաստանը միջոցներ ձեռք կառնէ պաշտպանելու իր շահերը։

«Թայմսին» հեռագրում են Թէհրանից, որ Անգլիայի յամառ պահանջը, որպէսզի Ստօկսը հրաժարվի երկրորդ անգամ պաշտօն ստանձնելուց, առաջ կը բերէ հաւանօրէն մի կացութիւն, որի ժամանակ հրաժարական կը տան բոլոր ամերիկացի կոմիսարները։ Հարցը կարելի է թէ հարթվի, եթէ Ստօկսի հարցը պրեցէդէնտ չը դառնայ ապագայի համար։ Ստօկսի աշխատանքը սահմանափակվելու է բացառապէս մայրաքաղաքում ժանդարմէրիայի վարժեցնելով՝ գաւառներում ծառայութիւն կրելու համար։

Բագուից Թէհրան գնացողները պատմում են, որ Նախկին շահը գտնվում է մի նաւի վրա Բարֆրուշի մօտերը։

Թաւրիզ.—Կտրեցին հնդկա-եւրօպական հեռագրի երկու թելերից մինը. սպասում են, որ միւսն էլ կտրեն։

Բենդերգեազ. — Թիւրքմէնները հաղորդում են, որ բախտիարների մի մասը անցել է Մահմէդ-Ալի շահի կողմը։

Ֆիրուզկուհի շրջանում կառավարական զօրքերը մի փոքր յետ են նահանջել, նախկին շահի զօրքերը առաջացել են։ Մի սրբազան սէիդ, գալով Մահմէդ-Ալիի կողմից, յորդորում էր բախտիարներին անցնել նախկին շահի կողմը։ Բախտիարները չը համաձայնեցին, սակայն սէիդին ճանապարհ դրին պատւով։

Ուրմիա.—Քիւրդերը Էնզար շրջանում կողոպտել են երեք գիւղ։ Թաներջամբօն հեռացել է Մալհամ գիւղից, սպառնալով վերադառնալ մեծ զօրախմբով։ Գիւղացիները պատրաստվում են պաշտպանվելու։

ԳՈՐԾԱԴՈՒԼ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 օգոստոսի

Լիվերպուլ.—Գործադուլային կոմիտէն որոշեց յորդորել նաւաստիներին և այլ բանւորներին՝ աշխատանքները չը վերսկսել, քանի որ բանակցութիւնները բեռնակիր բանւորների հետ մի դրական կէտի դեռ չեն յանգել։

Գործադուլը դադարեց։ Լուրջ անկարգութիւններ ծագեցին Դարլինգտոնում, Օկլէնդում և Բիշօպում։ Ուղարկված են զօրքեր։

Լոնդոն.—Երկաթուղային բանւորները հանգստօրէն վերադառնում են իրանց պարապմունքներին։ Դժուարութիւններ յարուցվում են միայն Մանչեստերում՝ հիւսիս-արևմտեան երկաթուղագծի վրա։

Երկաթուղային հաղորդակցութիւնը մտաւ իր նորմալի մէջ։ Միայն Մանչեստերում գործադուլը շարունակվում է։

Լինկօլն.—Երէկ տեղի ունեցան լուրջ անկարգութիւններ։

ՕՍՄ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Ի լրումն Կ. Պոլսի մեր թղթակից Շառայլի նամակի («Մշակ» № 170), Թիւրքիայի քրիստոնեայ համայնքների հոգեւոր պետերի արած առաջադրութեան մասին օսմ. ներկայ կառավարութեանը, ստորև առաջ ենք բերում «Բիւզանդիոնից» հետեւեալ յօդուածը։

Խառն ժողովն երէկ (27 յուլիսի) առաւօտ գումարուեցաւ ի ներկայութեան անդամոց մեծամասնութեան։ Տեղապահ սրբազանը տեղեկութիւններ հաղորդեց պատրիարքարաններուն մատուցած հաւաքական թաքրիրի նկատմամբ, և այս առթիւ կառավարութեան կողմէ անցեալ կիրակի օրուան եղած զեկոյցը և խորհրդակցութեամբ ձեռք առնուած որոշումները հաղորդեց։

Ժողովը իր հաւանութիւնն յայտնելով եղած կարգադրութեանց՝ որոշեց, որ երէկուան կատարուելիք բանակցութեանց պատրիարքարանին ներկայացուցիչներն ալ մասնակցին, և պաշտօն յանձնեց իր անդամներէն տէր Յովհաննէս Արշարունի սրբազանի, ինչպէս նաև դոքտ. Տաղաւարեան և Ս. Կարտիկեան էֆ.-ներուն անմիջապէս երթալ դատական մինիստրութեան պաշտօնատունը և տեղեկանալ կառավարութեան տեսակէտներուն նոյն հաւաքական թաքրիրին նկատմամբ՝ առանց լիազօրութեան, արդիւնքը խառն ժողովոյ ներկայացնելու պայմանաւ։

Ազգ. պատրիարքարանին ներկայացուցիչները դատական պաշտօնատան մէջ գտան յունաց պատրիարքարանին ներկայացուցիչները՝ Քաղկեդոնի մետրապոլիտ տէր Երմանոս, Բուշօ և Եօանիդիս էֆէնդիները, ինչպէս նաև բուլղարաց ներկայացուցիչները՝ Դալչէֆ և դոքտ. Կօզմա էֆ.-ները, և ներկայանալով դատական մինիստրին՝ ի ներկայութեան կրօնից տեսչին՝ երկու ժամու չափ խորհրդակցեցան թաքրիրին կրթական և զինուորական խնդիրներուն վերաբերեալ առաջարկութեանց վրայ։ Գոհացուցիչ է, որ կառավարութիւնը սկզբունքով ընդունած է թէ կրթական և թէ զինուորական խնդիրներուն մասին եղած առաջարկութիւնները մեծաւ մասամբ, բաց ի մէկ-երկու կէտերէ, որոնք թաքրիրին մէջ ալ ոչ իբրև պահանջ, այլ իբրև բաղձանք ներկայացուած էին։

Երէկուան խորհրդակցութիւնը տեղի կունենար իմանալու համար, թէ կրթական և զինուորական առաջարկութիւններուն մէկ քանի կէտերը ինչ տեսակէտով ներկայացուցած էին պատրիարքարանները։ Միջազգային յանձնաժողովոյ հայ անդամ դոքտ. Տաղաւարեան և Դալչէֆ էֆ.-ները տուին հարկ եղած բացատրութիւնը, և համոզում գոյացուց այդ մասին դատական մինիստրը ու նշանակել տուաւ այդ կէտերը կրօնից տեսչին, որպէսզի պատերազմական և կրթական մինիստրներուն ալ հաղորդէ և անոնք ալ կարգադրուին։ Կրթական գլխաւոր կէտերն ասոնք են։

Կառավարութիւնը կընդունի զանազան

ազգաց հոգևոր պետերու իրաւասութիւնն իրենց վարժարանաց վրայ: Անոնց կուտայ իրաւունք դպրոցներու ծրագիրները պատրաստելու և վաւերացնելու, վկայական տալու ուսուցիչներուն և ուսուցչուհիներուն, որոնք պիտի ճանչցուին մինիստրութեան կողմէ, միայն թէ, շէհադէթնամէ բառին տեղ էհլիէթնամէ պիտի ըսուի, որովհետև Երեսփ. Ժողովէն վաւերացեալ օրէնքներուն մէջ այդ բացատրութիւնը գործածուած է: Կառավարութիւնը կընդունի նաև, որ երբ կրթական քննիչներն ոևէ վարժարան երթան, տեղեկութիւն տան տեղւոյն հոգևոր իշխանութեան, որպէսզի եթէ պէտք ըլլայ՝ պաշտօնեայ մը ընկերանայ իրենց և հարկ եղած բացատրութիւնը տայ: Մէարիֆի բաժինը (Դիւան) պիտի տրուի առաջնորդարաններուն միջոցաւ, որովհետև անոնք կրնան որոշել, թէ իրենց վիճակին մէջ ամենէն աւելի նպաստի կարօտ վարժարանն ո՞րն է: Եթէ վէճ ծագի առաջնորդներուն և տեղական իշխանութիւններուն միջև դպրոցական խնդրի մը վրայ, կրթական տնօրէնը պիտի իմացնէ մինիստրութեան և ինքնագլուխ չպիտի գործէ: Օտարահպատակ ուսուցիչները պիտի պաշտօնավարեն միայն իդադի աստիճան ունեցող վարժարաններու մէջ, իսկ նախնական վարժարաններու մինչև հիմա դասախօսող ուսուցիչները պիտի պաշտօնավարեն. ասկէ վերջ արտօնութիւն պիտի տրուի, բացի այն պարագայէն, երբ մասնաւոր ուսուցչի ներկայութեան պէտքը զգալի կը դառնայ և կառավարութիւնը կը հաստատէ այդ պէտքը: Կառավարութեան առարկութիւնը սակայն այն է, թէ կայմակամներ միայն Մուլքիէի ընթացաւարտներէն կրնան ըլլալ, հետևաբար կարելի չէ որ զանազան ազգաց բարձր. վարժարաններէն ելլող աշակերտներու պետական ամեն պաշտօններու մէջ անխտիր ընդունելուն իրաւունք տրուի: Այս կէտին պատասխանուեցաւ, որ եթէ յատուկ կանոնագրով օրէնք կայ կայմակամներու համար, գոնէ այլևայլ ազգաց բարձր. վարժարաններէն ելլող ընթացաւարտներ պիտի կրնան պաշտօնավարել իբրև միւդիր կամ ուրիշ ոևէ պաշտօնով: Դարձեալ՝ կառավարութիւնը կը պահանջէ, որ վկայականներուն մէջ ամեն ազգ իր լեզուէն զատ թիւրքերէն թարգմանութիւնն ալ ընէ:

Այս կէտն հայոց համար վերջացած է, որովհետև արդէն իսկ ընդունուած է և կը գործադրուի: Երէկ յոյներն ալ ըսին, թէ կառավարութեան ներկայացուելիք վկայականներուն համար թիւրքերէն թարգմանութիւն մը կրնայ կցուիլ: Դարձեալ՝ կառավարութեան կողմէ ընդունուած է, որ առանց արտօնութեան գործող բոլոր դպրոցներուն արտօնագիր տրուի, բայց ասկէ ետք հիմնուելիք դպրոցներու համար գործադրուի այս մասին որոշեալ հրահանգը:

Երէկ պատրիարքարաններու ներկայացուցիչներն հարցուցին, թէ ինչ է այս հրահանգը: Դատական մինիստրն իր մօտ չունենալով՝ խոստացաւ գտնել և ներկայացնել: Վարժարաններու ծրագիրը պիտի ներկայացուի այն ատեն միայն, երբ փոփոխութիւն կրէ, իսկ վարժարաններուն ի նպաստ տրուելիք ներկայացումներուն կամ պարահանդէսներուն առթիւ պիտի գործադրուի օրէնքը, բայց հանգամանքութիւններն ազատ պիտի ըլլան: Բուլղարաց ներկայացուցիչը բացատրեց, թէ շատ վարժարաններ կան, որոնք կապրին գանձանակներով և առձեռն նպաստներով: Գալով զինուորական խնդիրներուն վերաբերեալ առաջարկութիւններուն, ատոնց մէջ քանի մը կէտեր կան, որոնք ներկայացուած էին պատրիարքարաններուն կողմէ իբրև բաղձանք, ոչ իբրև պահանջ: Այս մասին պատրիարքարաններու ներկայացուցիչներն երեկ բերանացի բացատրութիւններ տուին և գրեթէ համաձայնութիւն գոյացաւ քանի մը կէտերու վրայ. օրինակի համար, առաջարկուած է, թէ բոլոր զինուորական շրջանակները՝ տարուէ տարի որոշեալ տարիքը լրացնող ամեն ոչ-իսլամ անհատներու թիւին համեմատ բաշխում մը ընելով՝ առանց բացառութեան ամեն շրջանի վիճակարկութեան գործողութիւն կատարեն:

Հարցուեցաւ, թէ այս առաջարկութեան շարժառիթն ինչ է: Պատասխանուեցաւ, թէ շատ անգամ զինուորական տարիքի մէջ գտնուող ոչ-իսլամ անհատներ չեն գիտեր, թէ այդ տարին զինուորութեան պիտի կոչուին թէ ոչ, որպէսզի իրենց գործերն այս կերպով կարգադրեն և պատրաստ գտնուին, որովհետև պատերազմական մինիստրութիւնն ուզած տեղէն զինուոր կառնէ և չուզած տեղէն չառներ, մինչդեռ այս պարագային մէջ բացառութիւնն անտեղութեանց պատճառ կըլլայ: Այս կէտը նշանակուեցաւ, Մահմուդ-Շէվքէթ փաշայի նկատողութեան յանձնելու համար: Պատերազմական մինիստրը թէ ասոր և թէ ուրիշ տեսակէտի մը սկզբունքով հակառակ չէ, այսինքն զինուորական ծառայութիւնը խաղաղութեան ատեն որոշ շրջանակներու մէջ կատարուի, ինչպէս Անատոլուի զինուորն իր զինուորական ծառայութիւնը լրացնելու համար մինչև Շքոտրա երթալու չհարկադրուի, այլ իր շրջանակին մէջ լրացնէ այդ ծառայութիւնը, իսկ պատերազմի ատեն երթայ ուր որ կուզուի: Պատերազմական մինիստրը զինուորական օրէնքը թոյլատու չի գտներ ասոր, բայց երեկ վերստին նշանակուեցաւ ներկայացնելու համար իր նկատողութեան, ինչպէս նաև ընտանիքի մը միակ զաւակը զինուորութենէ ազատ պահելու պարագան, որ խնդրոյ առարկայ եղած է: Իսկ կնոջ մը երկու զաւակներէն մէկը միայն զինուոր առնելու առաջարկը՝ «այրի կնոջ մը» երկու զաւակներէն մէկը ձևով պիտի բարեփոխուի:

Ընդունուած է դարձեալ, որ ամեն ազգերու կրօնքն և իրենց ցեղային վիճակը նկատողութեան առնելով՝ զինուոր. օրէնքը բարեփոխուի. նոյնպէս զինուորական ծառայութեան մէջ գտնուող ոչ-իսլամներու դաւանափոխութիւնը չընդունուի. դարձեալ զինուորական կանոններն և հրահանգներն ամեն ազգի իր հասկցած լեզուով թարգմանուին. ընդունուած է նոյնպէս, որ բանակներու մէջ շրջուն քահանաներ գտնուին, զինուորական վարժարանը մտնել ուզող աշակերտներու դիւրութեան համար թիւրքերէն լեզուին էական և հիմնական ծանօթութիւնը միայն բաւական համարուի, առանց մրցման քննութեան ամեն պայմաններն ի գործ դնելու: Մինիստրը նշանակեց նաև, պատերազմական մինիստրին նկատողութեան յանձնելու համար՝ մուլքիներու համար որոշեալ 17 տարիքը 21-ի բարձրացնելու առաջարկը, որ արդէն ընդունուած զինուորական օրէնքներու հակառակ նկատուելով՝ հաւանական չէ որ ընդունուի: Պահեստի օֆիցէրներու վարժարանին աշակերտներն ալ իրենց դպրոցական շրջանին վերջին ամիսներն իբրև օֆիցէրի պաշտօն վարելով, այդ կերպով վկայական պիտի ստանան վարժարանէն: Մասնաւորապէս զինուորական խնդիրներու մասին նշանակուած կէտերը յանձնաժողովոյ կողմէ վերստին նկատողութեան պիտի առնուին, և երկրորդ տեսութեան մը մէջ այդ մասին եզրակացութիւնները պիտի հաղորդուին, և եթէ հարկ ըլլայ, դարձեալ լուսաբանութիւններ պիտի առնուին: Ազգ. պատրիարքարանի ներկայացուցիչները Ղալթիոյ խորհրդարանը վերադարձան երէկ կէսօրէն յետոյ ժամը երկուքին, երբ խառն ժողովը գումարուած էր ու կրօն. ժողովը նիստ կընէր, և հաղորդեցին տեղապահ սրբ. ին, թէ իրենց բանակցութեան արդիւնքն ուրոյն տեղեկագրով մը պիտի ներկայացնեն խառն ժողովին, իր տեսութիւնը լսելու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍՈՒՆՑԱԾ ԽՆԴԻՐ

«Մշակի» թիւ 167-ի մէջ «Արարատէն» քաղուած լուրերուն բաժնին մէջ հանդիպեցայ Էջմիածնի տեղակալի մէկ կարգադրութեանը: Տեղակալը չէ հաճեր Մուշեղ եպիսկոպոսն Ամերիկայի հայոց առաջնորդ ճանչնալ, որովհետև վերջինս Սսի միաբան է, իսկ Ամերիկայի թեմը կը գտնուի Էջմիածնի իրաւասութեան ներքոյ:

Արդ՝ փափագելի է գիտնալ, թէ Ամերիկայի թեմը, Էջմիածնի իրաւասութեան ներքև գտնուելուն պատճառով, պէտք է որ զրկուի կարող, բազմակողմանի գիտութեանց տէր և ժամանակի ոգիով կրթուած առաջնորդէ մը:

Ամերիկահայը կը սիրէ տեսնել Մուշեղ եպիսկոպոսն իրեն առաջնորդ և, ընտրելով զայն քուէներու ջախջախիչ մեծամասնութեամբ, կը սպասէր Էջմիածնի հաստատութեան: Իսկ այսօր Էջմիածինը կը յայտնէ, որ «...Մուշեղ եպիսկոպոսը, որպէս Սսի միաբան, չէ կարող Ամերիկայի հայոց առաջնորդ լինել, որովհետև Ամերիկան Մայր Աթոռի տէրունի թեմ է»:

Արդեօք կրօնա-դաւանական խտրութիւն մը կայ Էջմիածնի և Սսի աթոռներու միջև, որ չեն փափաքիր ու չեն հանդուրժեր տեսնել մէկ աթոռի միաբանը որպէս միւս աթոռին պատկանող թեմերէն ոևէ մէկուն առաջնորդ կամ պաշտօնեայ:

Իսկ ով որ հայ եկեղեցւոյ զաւակ է, ան գիտէ, որ մեր այդ երկու աթոռներու միջև դաւանաբանական ոևէ տարբերութիւն չկայ:

Արդ՝ Էջմիածինն և Սսի աթոռները ներքին համերաշխութեան կապ մը հաստատելու չեն՝ մայր եկեղեցւոյ հարազատ զաւակներու կրօնա-բարոյական շահերը չը վտանգելու բարձր ձգտումով: Այսպիսի պարագաներու մէջ բոլորովին անհեթեթ է անջատ աթոռներու խնդիր մէջտեղ հանել՝ չհաստատելով այս կամ այն աթոռի միաբանը այն ժողովրդի հովուութեան համար, որ իր քուէն ջախջախիչ մեծամասնութեամբ կը վստահանայ այս կամ այն հոգևորականին: Այսպիսի դէպքերու ժամանակ անհրաժեշտ է հետևիլ «Ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ» սկզբունքին: Զի որ, վերջապէս, պաշտօնեան է հասարակութեան համար, այլ ոչ ընդհակառակը:

Մենք թոյլ կուտանք մեզ կարծելու, որ եթէ այս երկու աթոռները սրտով ցանկացած ըլլային, վաղուց ի վեր այս հարցը լուծուեր էր ի նպաստ ժողովրդի շահուն: Զի որ մենք ունինք լայն սահմանադրական և ռամկավարական ոգիով եկեղեցի: Ահա մեր այդ եկեղեցիի ոգին մեզ պիտի դրդէ, որ ժողովրդի կեանքին մէջ տեղի ունեցած երևոյթներն ալ նոյն ռամկավար ոգիով յառաջ տանինք:

Վերջին տարիներս այս խնդրի շուրջ «Մշակի» մէջ քանի մը յօդուածներ տպուեցան, բայց դեռ դրական քայլ մը չառնուեցաւ:

Ի սրտէ ցանկալի է, որ Լուսաւորչին գահը բարձրանալու արժանացող անձը, ով որ ալ ըլլայ անիկա, իր կարևոր և առաջին գործերէն մէկը համարէ երկու աթոռներու միջև համաձայնութիւն մը գոյացնելու խնդիրը և յարգէ ժողովրդի ձայնը:

Խնդիրը հասունցած է:

Խ. Յ. Մեսրոբեան

ԳԱՒԱՌԻ ՁԱՅՆԸ

Հոգևորական դասը, որպէս պատասխանատու տնօրէն հոգևոր հաստատութիւնների, որպէս մի մեծ պատասխանատու ղեկավարող մարմին ինքը պիտի իր գործունէութեամբ հետաքրքրէ ժողովրդին, տալով ամեն տեղ անարատութեան, արդարութեան օրինակ, մերձենալի դարձնէ ամենի քննութեան համար իր գործունէութիւնը, որը միայն հնարաւորութիւն կը տայ, տեսնելով մաքրութիւնը, նուիրուել նրան կամ հեռանալ նրանից, երբ նա զեղծումներով ու կեղծիքներով է ապրում:

Մեզանում հոգևորականութեան՝ մթութեան քօղով ծածկված գործունէութիւնը, ժողովրդին հաւատափոխանալու համար, անմատչելիութեան է հասնում. շատ դէպքերում նրա ակնյայտ ապօրինութիւնները, առիթ են տալիս կասկածելու նրա բարոյական բարձրութեանը:

Ամեն մի ժողովրդական հաստատութիւն պարտական է իրան յանձնված գործի մասին հաշիւ տալ հասարակութեան: Հաշուետուութիւնը գործի կենսական տարրերից մէկն է. եթէ չը լինի հաշուետուութիւն, չը կայ առողջ գործ:

Իսկ մեզանում, մեր հոգևոր վարչութիւնների գործունէութեան մէջ լռած ու տեսնված կայ բացարձակ հաշուետուութիւն ժողովրդի առաջ:

Ոչ,—կը լսի ամեն կողմից: Այնտեղ ամեն ինչ հաստատութիւնների փոխադարձ հաւատի վրա է հիմնված. չէ որ իրանք, հաւատի քարոզիչները (sic), պիտի հաւատալու գործնական օրինակ ցոյց տան: Իսկ թէ որքան է շահագործվում այդ վեհ գաղափարը մեր հայր սուրբերի կողմից այդ, կարծեմ, պարզ է բոլորիս: Ահա այս մթութիւնն ու անորոշութիւնն է տիրում ամեն տեղ, և, շնորհիւ այսպիսի դրութեան, օրինազանցութիւնը, զեղծումները մեզանում քաղաքացիական իրաւունք են ստացել: Այդպիսի գործունէութիւնը այլևս խորթ չէ ժողովրդի աչքին. հաշտվում է նա իբրև դրութեան հետ, տեսնելով, որ իր բողոքները ամեն տեղ մնում են ձայն բարբառոյ յանապատի:

Ո՞ր հայ համայնքի մէջ մտնես, որ չը լսես՝ «չը գիտենք ուր է գնում մեր տուածը. հասնում է Էջմիածին թէ ոչ. եթէ գիտենանք, որ հասնում է և ծառայում իր նպատակին, մի հայ քրիստոնեան իր կոպէկը կը խնայէ Էջմիածնից: Ինչու Պետրոսավայրին թոյլատրվել է պսակվել հինգերորդ աստիճան ազգականուհու հետ, իսկ Մարկոսին վեցերորդ աստիճանը չէ թոյլատրըվում. ինչու գիւղերից պաղի, հոգեբաժին է հաւաքվում, իսկ քաղաքներից ոչ. ինչո՞ւ տէր-Մարուքին չեն պատժում ապօրինի կենակցութեան համար, մինչդեռ տէր-Թորոսին, որ տէր-Մարուքից է օրինակ վերցրել, կարգալոյծ արին. ինչ է. նա, տէր-Մարուքը, քաղաքի քահանայ է, փող, գիրք ունի, գիտէ՝ ամեն փորում ինչպիսի օձեր կան. իսկ տէր-Թորոսը պատժվեց, որովհետև գիւղի խեղճ քահանայ էր»:

Այսպիսի օրինակներն անթիւ են:

Մտէք գաւառ, ծանօթացէք այնտեղի հոգևոր հաստատութիւնների հետ, կը տեսնէք, որ այնտեղ կատարեալ ինքնիշխանութիւն է գործակալ քահանայի կողմից դէպի ստորադրեալ քահանաները և ժողովուրդը: Գործակալութիւնը պիտի ձրի լինի, չը կայ նրա համար պաշտօնապէս որոշված ռոճիկ. մինչդեռ ճայպէս նրա ռոճիկը տարեկան հասնում է 1000 րուբլու: Ամեն մի պսակի հրամանից իրան վերցնում է 1 ր., իսկ աթոռական պսակագրամ արդիւնք՝ որքան քէֆը ուզի, որը քասակը և կորչում գրված, որ ուղարկվում է բարձր ատեան, դժուար թէ համապատասխան լինեն: Ինչի՞ էլ պիտի համապատասխանեն, քանի որ ոչ հաշուետուութիւն կայ, ոչ քննութիւն: Դուրս է գալիս հայր գործակալը գաւառ պաղի կամ հոգեբաժին հաւաքելու. այստեղ էլ իր աջնամբոյրն ունի, որի պատճառով շատ անգամ սակարկութիւն է լինում երեցփոխի հետ: Պաղի ու հոգեբաժնի հաշիւը, ի հարկէ, դարձեալ փակ է մնում. պատահում է, որ մի քահանայ ուզում է ուրիշ ծուխ հովուել. նա պիտի վաղօրօք պայմանաւորվի հայր գործակալի հետ. պատահում են և չհաս պսակադրութիւններ, այստեղ էլ պէտք է տեսնել գործակալին. և շատ ուրիշ դէպքեր:

Այս ինստանցիայից յետոյ գալիս է յաջորդութիւնը. հայր-սուրբը նոյնպէս ունի իր բազմաթիւ միջոցները օգտվելու ժողովրդի արնագին կոպէկներից: Նոյնն են և մնացած հաստատութիւնները, բայց տարբեր ձևով ու չափով:

Այս ցաւը, որ դարերի կեանք ունի, հետևանք է այն բանի, որ չը կայ քննութիւն, բացարձակ հաւատարմութիւն է տիրում հաստատութիւնների մէջ, չը կայ դիսցիպլինա: Ամեն տեղ, ամեն հիմնարկութիւններում գոյութիւն ունի գործունէութեանը կենսունակութիւն տուող այդ ֆակտորը, իսկ մեզանում նա չը կայ, նշանակում է՝ չը կայ մեզանում հանրօգուտ գործելու տրամադրութիւն և պատրաստակամութիւն:

Հոգևոր հաստատութիւնների արժանավայել գոյութիւնը, նոյնպէս և ժողովրդի շահը պահանջում են ունենալ մի յատուկ, մշտական քննիչ՝ քննելու հոգևոր ատեանների բոլոր գործերը, մանաւանդ գաւառներում, ուր ամեն բան կատարվում է, բայց և ամեն բան քօղարկվում: Գիտենք, որ անաչառ քննութիւնը շատ տգեղ պատկերներ կը հանէ լոյս աշխարհ, բայց չը պէտք է դրանից խուսափել. քօղարկված վէրքը աւելի քան վտանգաւոր է. որքան շուտ, այնքան լաւ:

Այս է գաւառի ձայնը, որի ցանկութիւնն է տեսնել անորոշութեան, զեղծումների փոխարէն պարզ ու յստակ գործունէութիւն:

Արաքս

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ սիրուն է հնչում այս խօսքը մարդու ականջին և ինչու այդպէս չը հնչէ, քանի որ մի ազգի բաղդաւորութիւնը կամ դժբաղդութիւնը, առաջադիմութիւնը կամ յետադիմութիւնը կախված է իր մատաղ սերնդից:

Եթէ ուզում էք մի ազգի կուլտուրայի աստիճանը իմանալ, կրիտիկայի ենթարկեցէք այդ ազգի երիտասարդութիւնը, դուք անշուշտ կը գաք որոշ եզրակացութեան:

Երիտասարդութիւնը այն բարձր դերն է խոշոր ազգերի մէջ, ինչպէս գործող ոյժը արհեստի մէջ: Նա է, որ իր լրջութեամբ օրինակ պիտի տայ բարոյականութեան, նրա միջոցով պիտի ծաղկի արհեստը, որովհետև ինքը ներկայանում է գործող ոյժը, նրա միջոցով պիտի ծաղկեն և ընդարձակվեն արդիւնաբերութեան բոլոր ճիւղերը և ապագայ աղքատութեան առաջն առնվի:

Երիտասարդ-ուսանողութիւնը ամեն խոշոր հարցերում պատասխանատուութիւն ունի ապագայ սերնդի առաջ: Այդ հանգամանքը պէտք է մտածել տայ մարդկանց: Եւ այդ մտածմունքից պէտք է մարդիկ սթափվեն և ասեն՝ «այո, այս բոլորը ճիշդ է, բաւական է այսքան անտարբերութիւնը, ոտքի ելնենք, ժամանակը թանգ է և սկսենք գործել»:

Եթէ մենք համեմատելու լինենք Եւրոպայի երիտասարդութիւնը մեր երիտասարդութեան հետ, կը տեսնենք, որ մենք այնքան ցածր աստիճանի վրա ենք կանգնած, որ ոչ մի կրիտիկայի չէ դիմանում. բացառութիւն կազմում է Սպանիան:

Սպանիան գտնվում է ամբողջովին կղերի ազդեցութեան և կամայականութեան տակ թէ մտաւորապէս և թէ նիւթապէս. արհեստը, գիտութիւնը, վաճառականութիւնը կղերի ազդեցութեան տակ է. ինչ ուղղութիւն որ իրան ձեռնտու է, այն էլ մտցնում են ժողովրդի մէջ. սակայն այստեղ էլ փոքր ինչ փոփոխութիւն է նկատվում, բայց ոչ այն չափով, որ ժողովուրդը կղերի ճիրաններից ազատվելով՝ ազատ շունչ քաշէր:

Այդ ուղղութեան հետևանքն այն եղաւ, որ Ամերիկայի տիրապետող և Եւրոպայում առաջնակարգ դեր խաղացող Սպանիան, դարերի ընթացքում միակողմանի, ուղեղ թմրացնող հոսանքով, կորցրեց անցեալ փառաւոր դրութիւնը, կորցրեց Ամերիկան և այսօր ընկած է երրորդ, չորրորդ պետութեանց շարքը:

Ֆրանսիան էլ մասամբ այդ ուղղութեան մէջ էր, մինչև որ Կոմբը ցրեց բոլոր կօնգրեգացիաները և կղերական ազդեցութեան վերջ դրեց թէ ստորին և թէ բարձր ուսումնարանական հիմնարկութիւններում, և շնորհիւ ֆրանսիական կառավարութեան ջանքերի՝ այսօր Ֆրանսիան ազատ ժողովրդական ուղղութիւն ունի բոլոր ուսումնարաններում:

Եւրոպայի մէջ, շնորհիւ կառավարութեան, միայն Անգլիան է, որ աւելի հոգ է տարել չը ծանրաբեռնել ուսանողութեան ուղեղները այն առարկաներով, որոնք այնքան էլ նշանակութիւն չունին, և մարմնամարզական առարկաներով տալիս են ազգին մտքով զարգացած և մարմնով ամրապնդված պիտանի անդամներ:

Ի՞նչ կարող ենք ասել մեր երիտասարդութեան, ուսանողութեան մասին, եթէ այսպէս շարունակվի. եզրակացութիւնը շատ տխուր է, պատճառները բազմակողմանի:

Մեր ուսանողութիւնը ինքն իրան կաշկանդված համարելով աւելի ընդարձակ իրաւունքներ ձեռք բերելու համար, ինչպէս առաջուց ունեցած էր, սկսեց քաղաքականութեան մէջ խառնվել, մանաւանդ այս վերջին յեղափոխութեան տարիները. այդ բանը հաճելի չէր կառավարութեան, և, համարելով սկզբնապատճառ, սկսեց աւելի ճնշել և հալածել նրանց. այստեղից դուրս եկաւ այն անտագօնիզմը, որ շարունակվում է մինչև այսօր: Երիտասարդ ուսանողութիւնը զգաց իրան վիրաւորված, սկսեց յուսահատվել, թերահաւատել և անտարբեր լինել դէպի գիտութիւնն ու ուսումը. և յիրաւի՝ եթէ այսօր բարձր ուսում աւարտողներին համեմատելու լինենք հների հետ, սար ու ձորի տարբերութիւն կը գտնենք:

Այսօրվայ երիտասարդ ուսանողութեան մէջ չէք գտնի լուրջ վերաբերմունք դէպի մասնագիտական խնդիրները և գիտական ուսումնասիրութիւնը, որոնք պիտի պարզաբանեն այն՝ ինչ հարկաւոր է մի ազգի, մի ժողովրդի առաջադիմութեան համար. դրանք զբաղված են իրանց զուարճութիւններով, անհաշիւ թատրոններ, կլուբներ, կօնցերտներ, ռեստորաններ յաճախելով և գեղեցիկ սեռից հրապուրվելով. դուք չէք տեսնի աշխարհիս վրա այնքան անուշահոտութիւն բանեցնող ուսանող-ուսանողուհի, որքան ուսանողը Ռուսաստանում. դուք չէք տեսնի ոչ մի տեղ այնքան ճիշդ մօդայի հետևող, ինչպէս Ռուսաստանում: Դուք չէք տեսնի Եւրոպայում այն կոստաւեր երևոյթը, որ գոյութիւն ունի Ռուսաստանում. դեռ հազիւ համալսարանում ոտք դրած, արդէն շատերը պսակված են և շատերն էլ ունեն իրանց աչքադրած հարսնացուն: Թող գուշակի ընթերցողը, թէ այս ուր կը տանի մեզ, և ի՞նչ պէտք է սպասել այդ տեսակ սերնդից: Դրանք մտածում են մի որևէ կերպով դիպլոմ ստանալ. և նրանք՝ որ արդէն թակարդի մէջ չեն ընկած առաջուց պսակվելով՝ ուզում են կեանքի մէջ մտնելով օժիտաւոր օրիորդներ ճարել ու հանգիստ ապրել:

Բայց ո՞վ է պատճառն այսպիսի դրութեան ստեղծվելուն. երիտասարդ ուսանողները գանգատվում են, որ ստորին ուսումնարաններում աւելորդ բաներով այնքան ծանրաբեռնում են մարդու ուղեղը, որ կատարեալ թմրութեան է հասնում մարդ, և այնպիսի մոմենտներ են լինում, որ յուսահատված՝ ուզում են կեանքին վերջ տալ, և քիչ էլ չեն պատահում այդպիսի դէպքեր: Անհաշիւ դժուարութիւնների յաղթելով, սպառված ոյժով վերջապէս մի կերպ աջողվում է աւարտել: Գնում են բարձր ուսման, այնտեղ էլ սահմանափակ կանոններով այնքան դժուարութիւնների են պատահում, որ թերահաւատելով ամեն բանից՝ ուզում են մի կերպ գոնէ աւարտած լինեն, որպէս զի շուտով ազատվեն:

Վարչական շրջաններն էլ պէտք է առանձին խնամքով ուժեղացնեն մատաղ սերնդի պատրաստութիւնը կեանքի համար, ժողովրդի բարգաւաճման համար:

Եթէ ժողովուրդ չը լինի, կառավարութիւն էլ չի կարող լինել. կառավարութեան միակ մտածմունքը ժողովրդի միակ բարօրութեան համար պիտի լինի:

Կառավարութեան սիւները երիտասարդութիւնը և ուսանողութիւնն են. տնկեցէք այդպիսի սիւներ, որոնք փտած չը լինեն. դուք պատճառ մի դառնաք նրանց փտելուն. սրանով է, որ պիտի ամրապնդվեն այն հիմքերը, որոնք ապագայում պարծանք են կազմելու աշխարհի առաջ:

Մոռացէք անցեալը, որ երկու կողմից էլ սխալներ են եղած, լուրջ մտածելու ժամանակն է: Արքիմեդն ասում էր. «Տուէք ինձ մի յենակէտ և ես աշխարհն շուռ տամ»: որովհետև յենակէտ չէ կարող լինել, ուրեմն դա կը լինի անկարելի. բայց մենք կասենք՝ «Տուէք մեզ այն, ինչ հարկաւոր—և այդ կը լինի և յօգուտ կառավարութեան—այն ժամանակ դուք շուտով կը տեսնէք Ռուսաստանը կերպարանափոխ եղած: Բայց եթէ շարունակվի այս դրութիւնը, թող նախ կառավարութիւնը և ապա ժողովուրդը գուշակէ, թէ ինչ ապագայ է սպասվում»:

Աշխարհիս վրա որչափ բարելաւութիւն է մտցվել, երբեք ժողովուրդը կատարելապէս հասունացած չէ հանդիսացել: Արդիւնքը գալիս է հետզհետէ. բոլորը կախված է գործի զարգացման ընթացքից, վարելու կերպերից:

Ալէքսանդր II-ի մտցրած բարենորոգումներից, ճիշդ է, ժողովուրդը պատրաստ չէր անմիջապէս օգտվելու, բայց որչափ օրհնութիւնների է արժանանում այսօր բարենորոգումների այդ շրջանը:

Բալթ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

V

Մեր իրականութեան մէջ լուծման կարօտ խնդիրներից մէկը՝ ներկայումս քահանաների կրկնամուսնութեան խնդիրն է, որ մերթ ընդ մերթ հրապարակ է գալիս և դարձեալ մոռացութեան տրվում:

Ո՞ւմ յայտնի չէ արդեօք, թէ ինչպիսի, ըստ երևոյթին խայտառակ, դէպքեր են պատահել և շարունակ պատահում են, որտեղ գործող անձինք այրի քահանաներն են եղել: Եւ այդ դէպքերից շատերը վերջին ժամանակներս արձանագրված են եղել մեր մամուլի էջերում:

Նոյն իսկ հարիւրաւոր բողոքներ են եղել մեր գիւղերից ու քաղաքներից այրի քահանաների անբարոյական վարքի մասին, որը շատ տեղերում գայթակղութեան առիթ է դարձել տեղական հասարակութեան համար և այդ բոլոր բողոքների ու գանգատների վերջը այն է եղել, որ հոգևոր կառավարութիւնը մերթ ընդ մերթ, այս ու այն տեղ, կարգալոյծ է արել այդպիսի քահանաներին, իսկ ուրիշ աւելի կարդինալ և նպատակայարմար միջոցներ նա չէ մշակել և չի էլ մտածում չարիքի առաջն առնելու համար:

Ու մինչև այժմ էլ դրութիւնը մնում է նոյնը:

Այրի քահանաների թիւը օրէ-օր աւելանում է, բայց միջնադարեան օրէնքները փոխելու կամ մեղմացնելու մասին ոչ ոք չէ մտածում, և «բարոյականութեան» դէմ մեղմանող հոգևոր հայրերի թիւն էլ օր ըստ օրէ մեծանում է։

«Բարոյականութիւն»...

Դա մի զէնք է դարձել այնպիսի մարդկանց ձեռքին, որոնք իրանց աչքի գերանը թողած՝ ուրիշների աչքի շիւղն են ուզում միշտ տեսնել. և այդ բարոյականութեան անունից բարբանջողները մոռանում են կամ չեն ուզում հասկանալ, որ այլի քահանան էլ մարդ է, մարդկային բոլոր կրքերով ու ցանկութիւններով, որ՝ ճիշդ է՝ նրանց մէջ էլ կարող են լինել այնպիսիները, որոնք կարող են սանձել իրանց մարդկային ցանկութիւնները և ամբողջովին նուիրուել մի ինչ-որ երևակայական խիմերայի պաշտամանը, բայց այդպիսիների թիւը շատ քիչ կարող է լինել, մանաւանդ որ ամենքին քաջ յայտնի է, որ քահանայագործութեան են նուիրում իրանց ոչ թէ այդ գաղափարով տարված, նրան նուիրված մարդիկ, այլ գործ ունենալու, ապրելու համար։ Չէ որ քահանայագործութիւնն էլ մի արհեստ է և շատ արդիւնաւէտ արհեստ։

Վերջապէս ինչպէս բացատրել մի այսպիսի հակասութիւն։

Եթէ կրկնամուսնութիւնը սրբապղծութիւն է, ապա նա ինչու քահանային ոչ միայն թոյլ է տրվում, այլ նոյն իսկ պահանջվում է նրանից առաջին անգամ ամուսնանալ և ամուրի անձնաւորութեանը քահանայ ձեռնադրել չէ կարելի, իսկ եթէ այդ այդպէս է, ինչու այրիացած քահանային չէ կարելի երկրորդ անգամ ամուսնանալ... Մի թէ մի անգամ ամուսնանալը սրբապղծութիւն չէ, իսկ երկրորդ անգամը սրբապղծութիւն է։

Այս ինչ հակասութիւնների խառնաշփոթութիւն է։

Ինչպէս վերև ասացինք, քահանան նոյնպէս «մարդ» է բառիս բուն նշանակութեամբ, նոյն մարդկային կրքերով ու ցանկութիւններով, ինչպէս և մենք ամենքս, և նրան վերցնել, զատել սովորական մարդու շրջանից ու որոշ շրջանակների մէջ դնել հազիւ թէ հնարաւոր լինի։

Ո՞ւմ յայտնի չէ, թէ ինչպիսի՛ դեր է խաղում ժամանակակից մարդկութեան կեանքում կիրքը, և ինչպիսի՛ սոսկալի ոճրագործութիւններ են կատարվում նրա շուրջը, նոյնիսկ ամենալուսաւոր երկրներում և ամենազարգացած մարդկանց ձեռքերով. և այդ այդպէս լինելուց յետոյ, մի թէ մենք իրաւունք ունենք պահանջելու, որ քահանան, իբրև մարդ, միանգամայն հեռու լինի դրանից, պոկէ, դէն շպրտէ իրանից այնպիսի ցանկութիւններ, որոնք արմատացած են մեր արեան ու մսի մէջ։ Չը պէտք է մոռանալ, որ կամքի հսկայական ոյժ պէտք է ունենալ, կամ անձնազոհ կերպով տարված պիտի լինել մի գաղափարով, որպէսզի մոռացութեան տրվի բնութեան ամենազօրեղ պահանջներից մէկը։

Նոր գինին հին տիկերի մէջ պահել չէ կարելի։

XX դարում անկարելի է գործածութեան մէջ պահել անդրջրհեղեղեան ժամանակներից մնացած օրէնքները, և հարկաւոր է օր առաջ փոխել նրանց, համաձայնեցնել ժամանակիս պահանջների հետ։

Վ. Թումանեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բերքը Նոր-Բայազէտի շրջանում

Նոր-Բայազէտ, 4 օգոստոսի

Խոտաքաղը վերջացաւ. արդիւնքը այն չէր, ինչ որ սպասվում էր՝ անցեալ տարվայ հաշւով։ Այն քաղատեղը, որ անցեալ տարի արդիւնք տուեց՝ օրինակ՝ 10 սայլ խոտ, այս տարի 4—5 սայլ է արդիւնաբերում։ Կան նաև տեղեր, որոնք անցեալ տարվայ տուածի ⅓-ականը հազիւ տուին։ Իսկ աւելի վատ խոտատեղերը բոլորովին չարժանացան հնձելու էլ։

Ուրիշ խօսքով՝ անցեալ տարի մի դեսեատին քաղատեղը տալիս էր 9—10 սայլ խոտ, իսկ այս տարի ընդհակառակն 4—5 սայլ, այն էլ լաւ տեղերը։ Միջակ տեսակի տափերից վերցվում է 3—4 սայլ՝ մի դեսեատինից։ Իսկ վատ խոտատեղերը 2 սայլ են արդիւնք ունենում։ Այդպիսով, ահա, չը հաշւած այն տեղերը, որոնք բոլորովին խոտ չեն տուել, այս տարի խոտի արդիւնաբերութիւնը միջին թւով կարելի է համարել ⅓-ականը անցեալ տարվայ հաշւով, որ և անբաւարար է տեղական հողային կարիքների նկատմամբ։

Խոտի անբաւարար արդիւնքը վերագրվում է մասամբ գարնան ցրտերին, մասամբ երաշտին և դաշտային մկների աւերմունքին, ի բաց առեալ այն, որ տեղական անասնապահութիւնը մինչև յունիս ամիսը անարգել արածացնում էր իր հազարաւոր անասունները հէնց քաղատեղերի շրջաններում, հետևապէս խոտը արմատի վրա չորացաւ։

Խոտի սակաւութեան պատճառով տաւարի կերի թանգութեան նշաններ են երևում. թէպէտ դարմանը բաւականաչափ կը ստացվի հացաբոյսերից, բայց և այնպէս խոտի թանգութիւնը զգալի կը լինի մեզանում այս տարի, որովհետև կան անասնավաճառներ, որոնք երբեք դարմանով չեն կերակրում իրանց բազմաթիւ եղջիւրաւոր անասուններին, այլ միմիայն խոտով։ Այդ իսկ պատճառով՝ յաճախ ձմեռը խոտի գինը մեզանում կրկնապատկվում և եռապատկվում է։ Իսկ այս տարի աւելի վատ։

Որսորդ

Աւազակ Ջհանգիրն էլի ազատվեց

Ղալաչա, 2 օգոստոսի

Եկող սարաժնիկը պատմեց, որ պրիստաւ Երզնկանցը անցել է Նոր-Բայազէտի գաւառը և գիշերը շրջապատել է «Էշագ-Մէյդան» կոչված սարում աւազակ Ջհանգիրին։ Հրացանների համազարկից սպանվում է Բիօռ Ահմադը, իսկ Ջհանգիրը փախչում է ամեն ինչ թողնելով։

Սպանվածի դիակը Դիլիջան է ուղարկվել։ Թողել են մի մեծ խուրջին փամփուշտ, հեռադիտակ, պարաշօկներ, երկու երեք-գծանի հրացան։

Ինչպէս տեղեկացայ, Ջհանգիրը անցել է նորից Ղարայեազի անտառը։

Երկարատև երաշտից յետոյ այս օրերս յորդ անձրև եկաւ, որով այրված բուսականութիւնը փոքր ինչ կենդանացաւ և օդը զովացաւ։

Թուրքերը սարերից սկսել են քօչել, նոյնը և հայերը։

Փորստեր

Մի հեռագրի առիթով

Գանձակ, 3 օգոստոսի

Արժանահաւատ աղբիւրից տեղեկանում ենք, որ 31 ստորագրութեամբ մի հեռագիր է տրվել քաղաքիցս Կ. Պօլսի ազգային երեսփոխանական ժողովին, որ սա որքան կարելի է շուտ վերջ տայ Օրմանեան սրբազանի վրա բարդված մեղադրանքի քննութեան գործին, որպէսզի նրա կանդիդատութեան, որպէս արժանաւոր կաթողիկոսացուի, հնար լինի իր ժամանակին մտցնել կաթողիկոսացուների ցանկի մէջ։ Գր-Գօ

Հացի բերքը Շուշու շրջանում

Շուշի, 6 օգոստոսի

Դաշտավայրերի հունձը վաղուց վերջացած է, կալ են կալսում. լեռնային տեղերինը վերջանալու վրա է։ Այս տարի հացը սակաւ է։ Գարունը անձրևային էր. լաւ բուսան գարնան հացաբոյսերը. նոյնիսկ աշնանացանի այն տեղերում, ուր խստաշունչ ձմեռից տեղ-տեղ ոչնչացել էին, այնտեղերի սերմածներն էլ լաւ բուսան։ Բայց յունիս և յուլիս ամիսներում ոչ մի կաթիլ անձրև չեկաւ և բոլոր հացաբոյսերը այրվեցին։ Թէև հնձում են, բայց հասկերի մէջ ոչինչ չը կայ. գոնէ ծղոտները դարման դարձնելու համար՝ հարկադրված են հնձել։ Այրվեց և կորեկը։ Շուկաներում հացի գինը կանգնած է մի բարձրութեան վրա. ցորենը 1 ր. 40 կ., գարին 90—95 կ. պուդը։ Այս գները երևի աշնան ամիսներում կը բարձրանան, որովհետև առհասարակ գիւղացիները այժմ զբաղված լինելով գործերով՝ շուկայ գնալ չեն կարողանում, իսկ երբ աշունքին զունդագունդ իրանց գրաստներով կերթան շուկայ և մեր հարևանները տեսնելով հացի պահանջը՝ անշուշտ կը բարձրացնեն գները։ Լեռնային տեղերում հացը սովորականից կիսով չափ պակաս է։ Առհասարակ այս տարի ամեն բանի թանգութիւն է. իւղի պուդը 20 ր., պանիրը 7 ր., ձուն 2-ը 5 կ., միսը 13 կ.։

Այս անցած օրերում երեկոյեան կլուբից վերադառնալիս Պ. Եղիզարեանցը կողոպտվեց դրամաշորթներից։ Տարել են 1000 ր. արժող նրա մատանին, ատրճանակը և 125 ր. դրամ։

Այս գիշեր ռէալական դպրոցի մօտ բռնվեց իր ընկերոջ ձեռքով մի սափրիչի աշակերտ։

*

Ամառանոցը դատարկվում է

Կիսլովոդսկ, 5 օգոստոսի

Ամսիս 1-ից՝ օրէ-օր՝ եկողների թիւը զգալի կերպով պակասում է։ Նոր եկողներ, բացի հարևան կուրօրտներից, համարեա թէ չը կան։ Երեկոները գնացքերը լիքն են լինում գնացողներով, որոնք տոմսակներ ձեռք բերելու հոգսը օր առաջ են տեսնում։

Հիանալի եղանակ է կանգնած։ Երեկոները զգալի հով է լինում։

Էսսենտուկում, առայժմ, փորձնական թռիչքներ է կատարում Գերմանիայից նոր եկած Ց. Կացեանը իր մօնօպլանի վրա. շուտով կը կայանան իսկական թռիչքներ ժողովրդի ներկայութեամբ։

Աշ. Եզրեան

Հոգաբարձական ստահակութիւն

Նուխի, 1 օգոստոսի

Մի քանի տասնեակ տարիներ ապրող մեր դպրոցը իր պատմութիւնը հիւսել է անհատ ուսուցիչների և ուսուցչական ու հոգաբարձական կազմերի ներքին և արտաքին (հասարակութեան հետ) խառնակութիւնների և դալմադալների անվերջ շարաններից, որոնք մարդուս ապշեցնում են իրանց զանազանակերպութեամբ և անվայելչութեամբ, եթէ չասենք անբարոյականութեամբ. սակայն այսօրվայ կատարվածը մոռացնել է տալիս ամեն ինչ. այսօրվայ դէպքի առաջ նսեմանում է անցեալը, որովհետև... և կարծես թէ գրիչս անգամ չէ ուզում հաւատալ և չէ կարողանում գրել, որ կատարվածը քրէական մի յանցանք է... կատարված «ինտելիգենտ» յորջորջվող հոգաբարձուի և «ինտելիգենտ» համարվող ուսուցչի կողմից...

Հոգաբարձուն օգուտ քաղելով այն հանգամանքից, որ ուսուցչական կազմը ի նկատի ունենալով որոշ պատճառներ լուամուն կրում էր մի շարք հարուածներ՝ դպրոցում խլրտումներ չառաջացնելու նպատակով, կրկնում ենք, օգուտ քաղելով այդ հանգամանքից, միջոցների մէջ խտրութիւն չէ դրել «կաւելու ըմբոստ» ուսուցիչների դէմ տարվայ ընթացքում։

«Կախը» շարունակվել է ուսումն. տարին վերջանալուց յետոյ, և այն էլ ինչպէս... կեղծած պաշտօնական թղթերով...

Կեղծել են մի շարք հրաւէրներ. շնորհակալութեան թղթեր են ուղարկել կողմնակից ուսուցիչներին, պարսաւանքի են արժանացրել այն ուսուցիչներին, որոնք արժանի չէին, անորոշ ժամանակով հրաւիրված և հաստատված ուսուցիչներին մի տարով միայն հրաւիրել և այլն. և այդ ամենը քողարկելու, ծածկելու համար, հները պատառոտել, նորերը ուղարկել միայն և միայն, ինչպէս ինքը այդ հոգաբարձու-նախագահն է խոստովանվել, աւելի շուտ պարծեցել, իրան հակառակող ուսուցիչներին ծակելու համար...

Ընկեր հոգաբարձուների վստահութիւնը շահագործել, արած որոշումները կեղծել, ամբողջ տարին մի ուսուցչի ամենազզուելի խօսքերով քննադատել նոյն իսկ մանկավարժական ժողովում և յանկարծ տարվայ վերջում ընկերներին սխալ տեղեկութիւն տալ և նրան հրաւիրաթերթ ուղարկել, որովհետև...

Աւելացրէք այդ բոլորին և այն, որ բոլորովին օտար մի ուսուցչի հրաւիրաթերթ է ուղարկված (թէկուզ և պայմանական, յանցանքը յանցանք է), որ «կը հրաւիրենք ձեզ աւագ-ուսուցիչ...», և պատկերը կատարեալ կը լինի։

Նուխու ծխ. դպրոցի հոգաբարձութիւնն ինչ արեց, երբ այս բոլոր փաստերը նրա առաջ դրվեցին. հասարակութիւնը, թէկուզ այսօր մեծամասնութեամբ անտեղեակ, բայց վաղը ամբողջ մանրամասնութեանը ծանօթանալով՝ հաշիւ է պահանջելու նրանից։

Վիկօնտ

Բանտից ազատ արձակված

Ներքին Ախտա, 4 օգոստոսի

Այսօր այստեղի բանտից մի տարվայ բանտարկութիւնից յետոյ ազատ արձակվեց Յովհաննէս Տէր-Մարտիրոսեանը (Ա-Դօ), որը իր հրատարակած մի գրքի պատճառով դատապարտված էր մի տարվայ բերդարգելութեան։ Վ. Սինանեանց

«Գնա մեռիր, արի սիրեմ...»

Բագու, 4 օգոստոսի

Երկու օր առաջ Նաւթարդիւնաբերողների խորհրդի Բալախանու հիւանդանոցում երկարատև հիւանդութիւնից յետոյ կնքեց իր մահկանացուն Պետերբուրգի համալսարանի գիւղատնտեսական բաժնի ուսանող Սարի Թէմուրեանցը։

Հանգուցեալը նուխեցի էր, 23 տ. հասակում։

Բժիշկները բացէ ի բաց յայտնել են, որ հիւանդութիւնը առաջ է եկել վատ և պակաս սնունդից...

Հանգուցեալը չափազանց աշխատասէր և ուսումնասէր երիտասարդ էր, որի շնորհիւ էլ—չը նայելով բացի պառաւ մօրից ոչ ոք չունէր—ամեն ջանք գործ էր դնում, ինչ գնով էլ լինի, ձեռք բերել բարձրագոյն ուսում, որը և հանգուցեալին գլորեց սառը գերեզման։

Վերջին ժամանակներս պատմում էր իր բարեկամներին՝ չքաւոր ուսանողների չարքաշ կեանքից։

— Դա կեանք չէ, որ մենք ենք քաշում, —ասում էր հանգուցեալը,—երկու օրով քաղցած էինք մնում բառի բուն նշանակութեամբ, իսկ երրորդ օրը կամ թէյ ու հաց էր աջողվում մեզ ձեռք բերել, կամ եթէ ընկերներից մէկը 5—10 ր. էր ստանում, մի կտոր միս իրա ջրով ուտում էինք։ Այդ վերջին տեսակը մեզ շաբաթը մի անգամ հազիւ էր աջողվում։

Հանգուցեալի ընկերները սկզբում խոստացել էին ամսական մի քանի ռուբլով օգնել, բայց այդ խոստումները չքացել էին հէնց համալսարան մտնելու օրից քիչ անց։ Այնուհետև խեղճը մնացել է երկու կրակի մէջ. ոչ կարողացել էր ուսումից ձեռք քաշել, ոչ էլ կեանքի մէջ գործ ձեռք բերել։ Մի կողմից պակասում էր աշակերտների հետ պարապելու միջոց և այլ ծախսերը ձեռք բերելու, միւս կողմից ինքն էր պատրաստվում ծանր դասերի տակ։

Ահա այդ չարքաշ կեանքն էր, որ ծաղիկ հասակում գերեզման մտցրեց նրան։

Քանի այդպիսիներ կան...

Հանգուցեալի մարմինը փոխադրեցին Նուխի՝ ընկերական միջոցներով։

Ս. Գարագաշ

ԹՈՔԱԽՏԱՒՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԱԲԱՍԹՈՒՄԱՆՈՒՄ

I

Աբասթուման, 1 օգոստոսի

Որ Աբասթումանը Կովկասի կուրօրտներից իր զով և առողջարար կլիմայով ամենառաջինն է, դա փաստերի կարօտ չէ. փաստ է և այն, որ տուբերկուլեօզային կենդանի մեռածների մեծ տոկոսը բժշկվում է Աբասթումանում։

Ամբողջ Աբասթումանը ընկած է իրարից ոչ հեռու երկու սարերի միջի ձորում. սարերը ծածկված են գեղատեսիլ և բարձր սօճիներով և եղևնիներով, որոնք մի առանձին փայլ և գեղեցկութիւն են տալիս Աբասթումանին։ Ուժեղ քամիներ չեն լինում այստեղ, յաճախ անձրևներ են լինում, այդ պատճառով էլ եղանակը միշտ փոփոխական է։ Օդը աննկարագրելի մաքուր է. փողոցներն էլ չափազանց մաքուր են. ամեն օր աւելում և ջրում են։ Օդը ցերեկները լինում է 15—25°, իսկ գիշերները 5—15°։

Աբասթումանի մէջտեղից հոսում է Աբասթումանկայ գետը. այս գետից տեղացիները շարունակ որսալով կարմրախայտ համեղ ձուկը՝ վաճառում են ֆունտը 10 կ.։

Ամառանոցները այստեղ մեծ մասամբ շինված են եւրոպական նուրբ և շքեղ ճաշակով. աղիւսից կամ եռեւից շինված պարտէզներով, գեղեցիկ ծառ ու ծաղիկներով։ Բնակարանների գինը, ինչպէս լսում ենք, այս տարի աւելի էժան է, քան անցեալ տարի. պատճառը, որ այս տարի քիչ է եկւորների թիւը և սրանք էլ ոչ հարուստ դասակարգից։ Մի սենեակ ամբողջ սեզոնը կարելի է վարձել 50—150 րուբլի, նայած որ փողոցի վրան է գտնվում և ինչ տեսակ սենեակ է. երկու սենեակ 150—300 րուբլի իր խոհանոցով, և այդպէս աստիճանաբար։

Զարմանալի էժան է այստեղ կեանքը, հացի ֆունտը առաջին տեսակը 4½ կ., երկրորդը 4 կ., ձուն 10 հատը արժէ 15 կ., չը հալած իւղը (կարագ) պուդը 12 ր., ոչխարի մսի ֆունտը 15 կ., տաւարինը 13 կ.։ Ինքս ականատես եղայ, որ մեր տան տիրուհին 3 ճուտերին տուեց 40 կ.։ Չը նայած տիրող այսպիսի էժանութեան, ճաշարաններում և հիւրանոցներում ճաշը 16 րուբլուց պակաս չեն տալիս. տուածներն էլ Աստուած ճաշ համարէ, աւելի շուտ կարելի է հիւանդանալ, քան առողջանալ. իսկ պատահմամբ ճաշողներին այնպէս են պլոկում, որ յաճախորդը ստիպված է լինում միւս անգամ մուտք չը գործել ճաշարան։

Մ. Գէ—եան

ԱՄԱՌԱՆՈՑԻ ԿԵԱՆՔԻՑ

IV

Թատրոնի ամառային սեզոնը սկսվելուց առաջ տեղիս աւագների խորհուրդը ցանկալի էր համարել, որ գոնէ այս տարի ներկայացումներ տրվէին այնպիսի ոյժերով, որոնք բարձրացնէին գաւառական բեմի նուիրական նշանակութիւնը և մեզ ազատէին զանազան բաղդախնդիր «դերասանների» շահագործութիւնից։

Ցանկութեանս մի մասը իրականացաւ. «Հայ Դերասանական Ընկերակցութիւնը» բաւական կանօնաւոր պատրաստութեամբ սկսեց իր ներկայացումները շաբաթը 1—2 անգամ։

Չափազանց ուրախալի էր, որ դրանով կը սանձահարվէին զանազան աւանտիւրիստ-«դերասանները», որոնք ամեն տարի, առանց խղճահարվելու և իրանց մի փոքր հաշիւ տալու, անխնայ շահագործել են թատերասէր, փոքրաթիւ հասարակութեան հետաքրքրութիւնը և մանաւանդ գրպանները։

Բայց դժբաղդաբար մեր ուրախութիւնը ի զուր անցաւ։

Ամառվայ սաստիկ շոգերը մեզ մօտ փախցրին և ուրիշ դերասաններ, որոնք բացի կազդուրվելուց մտադիր էին կլորիկ գումարներ էլ աշխատել։

Չը նայած «Հ. Դերաս. Ընկերակցութեան» վարիչների ջանքերին, անհնարին եղաւ համոզելու նրանց՝ թողնել այդ մտադրութիւնը և միանալ կազմակերպված խմբի հետ։

Սկսվեց ներկայացումների մի անհատնելի շարան։ Հրապարակ եկաւ սկսնակ-դերասան Ղազարեանը «Քանդած Օջախով», «Հարստութեան զոհով», Թալանեանը «Կրծկրծով», Միրզոյեանը՝ «Ձմեռային Հէքիաթով» և այլն և այլն։ Բեմ հանեցին առաջին անգամ անընդունակ և բեմական տեխնիկային բոլորովին անծանօթ ոյժեր, որոնք ոչ միայն տապալեցին պիէսները, այլև նսեմացրին մայրենի բեմի նշանակութիւնը և կոչումը։

Շաբաթական 3—4 ներկայացումները ուղղակի զզվեցրին հասարակութեանը. սրահը աստիճանաբար նօսրացաւ և վերջը բոլորովին դատարկ մնաց։

Հետևանքը այն եղաւ, որ հասարակութեան մէջ առաջացաւ դժգոհութիւն, որը միանգամից բռնկվեց և փոխվեց բուռն բողոքի։ Աւագների խորհուրդը ստիպված եղաւ կրճատել ներկայացման օրերի թիւը։

Ցաւալի է, շատ ցաւալի, որ գեղարուեստի սիրահարները, նրա անունով երդվողները միանգամայն նսեմացրին և ոտնատակ տուին նրա բոլոր սրբութիւնները, ստորացրին գաւառական բեմի նշանակութիւնը, այն գաւառական բեմի, որը դեռ ևս մեզանում քաղաքացիական իրաւունք ձեռք չէ բերել և չունի երկրպագուների մի շօշափելի թիւ։

Մ. Դ.

ՆՈՐ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽԸ ԵՒ ՄԵՐ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գորիս, 1 օգոստոսի

Վերջապէս այսօր նորընտիր քաղաքագլուխ Մատվէյ Մատվէիչ Տէր-Գրիգորեանը և օգնական Գէորգ Գալստեանեանը (անցեալ քառամեակում ևս օգնական) հաստատված են իրանց պաշտօններում։

Քաղաքիս առաջին քաղաքագլխի առաջին քառամեակը անցաւ. աւելորդ է անցածի մասին գրել, քանի որ առանց այն էլ ժամանակին շատ է գրվել թէ դրսի թերթերում և թէ մի տարի առաջ քաղաքումս հրատարակվող թերթում։ Անցեալ վարիչների օրով եղած բոլոր նկատողութիւնները, որոնց գրողը և ընթերցողն եմ եղել, իսկական դրութեան պատկերն են պարզել մեզ, արտայայտել են միմիայն քաղաքիս մաքրութեան, առաջադիմութեան և արդիւնաւէտութեան հովերով տարվելով, առանց անձնական որևէ շահի դրդման։

Վաճառականութիւնը միայն՝ պահանջ չէր ցոյց տալիս քաղաքիս մաքրութեան, բուլվարների կանօնաւորման և այլ թերութիւնների վրա. նա եղածով բաւական էր և աւելի լաւը չէր ձգտում ունենալ։ Վաճառականութեան դիմաց փոքրաթիւ երիտասարդները սակայն, որոնք գիտէին քաղաքագլխի դէպի քաղաքը ունենալիք պարտականութիւնները և նրա ապերախտ վերաբերումը և կոչման ու անուան ի չար գործ դնելը, ի հարկէ բողոքում էին որևէ թերութեան և պակասութեան դէմ և պահանջում իրագործել այն բոլոր՝ երեսի վրա թողնված գործերը, որոնցով քաղաքս և քաղաքացիք են տուժողը։

Սակայն անցաւ առաջին քառամեակը, ուրեմն թող անցնեն թղթերին յանձնված բոլոր տրտունջները։ Մեր նոր քաղաքագլխի ու քաղաքիս երկրորդ քառամեակը լինի արդիւնաւէտ, շինարար և բարգաւաճ, յանուն մեր մի շարք հասարակական հաստատութիւնների գոյութեան և նորերի կեանք տալուն։ Այստեղ ուրուագծել է հարկաւոր մի շարք հրատապ ձեռնարկութիւններ։

Նախ՝ կանօնաւորելու է Միրումեանի՝ քաղաքիս նուիրած աղբիւրը, որը վերջերումս քաղաքում մի քանի մասերի բաժանվեց։ Ջրի խնդիրը Ջրառատ Գորիսում հին և լուրջ ցաւերից է։

Գոնէ եկող գարնանից կանօնաւորելու է քաղաքի բուլվարը, ուր այժմ եռնջա է ցանվում։ Հասարակութեանը զբօսավայր է հարկաւոր և ոչ եռնջա։

Փողոցների մաքրութիւնը միանգամայն կանօնաւորելու է. հարիւրներ են ծախսվել ջրերի կանօնաւորմանը, դարձեալ փողոցներով է ջուրը հոսում։

Շատ ցանկալի է որ քաղաքային վարչութիւնը քաղաքումս բաց անէր գրադարան-ընթերցարան, որի համար շատ աջակիցներ կունենար նա, իսկ օգտաւէտութիւնը անուրանալի է մեր հեռաւոր կողմ ընկած քաղաքում։

Պոստային երթեւեկութիւնը մինչև օրս էլ շատ վատ է. ըստ հնարաւորութեան պօստը շաբաթը երկուսի փոխարէն՝ գոնէ 3 անգամ ստացվէր Շուշուց։

Գորիսը, գաւառիս միակ քաղաքը և կենտրոնը լինելով, ոչ մի կրթութիւն չէ մատակարարում գաւառացուն, ծխ. դպրոցը հոգեվարքի մէջ է, պետական տարրականը՝ մեծ կարիքի դէմ փոքր և եղած պահանջը չը բաւարարող. ուստի և նոր քաղաքագլխի անդրանիկ գործը լինելու է միջամտութիւն ուր հարկն է՝ որևէ կերպ բանալու քաղաքումս պրոգիմնազիա կամ քաղաքային դպրոց, որոնց բացումով որոշ դիւրութիւն հասցված կը լինի կրթվող սերընդի ծնողներին, որոնք ուրիշ տեղեր են դիմում։

Աշխատելու է քաղաքի ունեցած և վիճելի հողերի գործը շտապեցնել, և աճուրդի հանել հողաբաժինները, որոնցով քաղաքս կը հարստանայ նոր տներով և բնակչութեամբ։

Առ այժմ բաւական համարելով յիշեալ ակնարկութիւնները՝ ցանկանք նոր քաղաքագլխին և նոր ձայնաւորներին նոր եռանդ, նոր կեանք ապագայ քառամեակում և անկաշառ պարտականութեան կատարում յանուն և յօգուտ մեր՝ գործի կարօտ քաղաքի։

Սազանդարեան

ԱԼԱՎԵՐԴԻԻ ՀԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Պատմական Սանահին գիւղի մօտ է այդ՝ սպառած ժայռերի արգանդից հարստութիւն արտադրող գործարանը։ Շրջակայ մօտաւոր և հեռաւոր գիւղերից շատ-շատերը կան այդ գործարանում աշխատողներ։

Իր ժամանակին շատ է գրվել, խօսվել այն մասին, թէ ինչպէս այդ գործարանից բարձրացող ծծմբացած ծխից վնասվում է տեղային բուսականութիւնը։

Նոյնիսկ առաջարկ եղաւ, որ մեր գիւղատնտես մասնագէտները տեղն ու տեղը ուսումնասիրէին և դրա հետևանքը յայտարարէին ի գիտութիւն նոյն գիւղացիների, թէ էապէս որքան այդ ծխից վնասվում է նրան ենթակայ գիւղացիների տնտեսութիւնը և կամ որքան կարելի էր յուսալ այդ խրոնիքական չարիքից ազատվելու կամ վարձատրվելու մասին, բայց, որքան յայտնի է, դեռ ևս ոչինչ չէ արված և դրութիւնը մնում է նոյնը։

Չարիքը, սակայն սրանով չէ վերջանում։

Գիւղացիների տնտեսականին, նիւթականին այդտեղից հասնող վնասներին աւելացել է նաև բարոյականը. բայց այս վերջին դէպքում արդէն մեղաւոր է ոչ թէ գործարանը, այլ ինքը, նոյն գիւղերի հարազատ զաւակ և գործարանում աշխատող գիւղացի բանւորութիւնը։ Չեմ ասում, ի հարկէ, որ մեր գիւղերի բարոյականութիւնը անմեղ գառան անարատութիւն ունի, ոչ. շեղումներ միշտ եղել են և կան, բայց ցաւն էլ այն է, որ մենք անզօր լինելով մեզ վարկաբեկելու եկող չարիքները վերացնելու փորձեր անգամ անելու՝ ինքներս բերում-մտցնում ենք նորանոր անբարոյականացնող օրինակներ և այդպիսով նպաստում նրա զարգացմանը և ընդհանրանալուն:

Ալավերդիի բազմաթիւ բանւորութեան մէջ երկու բան հաւասար չափով տարածված է, որ և աստիճանաբար անցնում է նաև գիւղերին. դա է թղթախաղը եւ արբեցողութիւնը, որ բերում են նրանց մէջ գտնվող «փողով խաղալ գիտեցող մասնագէտներ», որոնք կատարելագործվել են քաղաքներում կամ «լաւ խաղացողների» մօտ:

Եւ ահա գործից ազատ ժամանակ կը տեսնէք զանազան խմբակների զանազան անկիւններում կամ ընկերներից մէկի տանը նստած խաղալիս եւ խմելիս... Խաղում են և վերևից ու ներքևից այրող շոգերի մէջ բանելով, քափ ու քրտինքով ձեռք բերած կոպէկները տանում և տանուլ տալիս...

Մտէք այդ խմող-խաղացողների խաղատներից մէկը... պապիրոսներից բարձրացած թանձր ծուխ, գինի-արաղի հոտ, արբած բերանների հայհոյանքներ, կին, երեխաների ներկայութիւն և խաղ... Ահա ամփոփ պատկերը ազատ ժամերի օրակարգի...

Ի հարկէ այսպէս են ոչ բոլորը, յարգելի բացառութիւններ կան, որոնց մասին չէ խօսքս:

Այնուհետև մտէք դուք այն գիւղերը, որոնք ունեն ներկայացուցիչներ այդ խմող-խաղացող խմբերում, և դուք կը հանդիպէք նոյն—թէև ոչ կատարելագործված—պատկերներին... «Բանկ, ցխրա, բակարա, դուրակ, կօնչինա, դօմինօ» և այլն և այլն: Գիւղերին անծանօթ այս անունները արդէն մտել են գիւղացու շրջանը և, որպէս վարակիչ թոյն, մտնելով նրա արեան մէջ, որջեր են փորում, իրանց համար մշտական տեղ պատրաստելու, որպէսզի թագստի տեղից կամաց-կամաց ծծեն նրա զուղը, ծուծը և արիւնը...

Փառք Աստուծոյ, իւրաքանչիւր գիւղում էլ կան բանիմաց և նման չարիքների վնասակարութիւնը հասկացող անձինք, ուստի նրանց էլ բարոյական պարտականութիւնն է արգելք հանդիսանալու այդ նոյն գիւղերի հասարակութեանց անունը, բարոյականութիւնը այլանդակելու և կեանքը թունաւորելու եկող նման երևոյթների տարածման...

Եօլչէ

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ՖԵՐԳԱՆԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Օշ, 27 յուլիսի

Այս տարի, համեմատած անցեալ տարիների հետ, Կօկանդում և իր շրջակայքում բոժոժի բերքը ստացվեց քիչ և վատ տեսակի:

Այդ բացատրվում է այն պատճառով, որ տեղիս ազգաբնակութիւնը չէ ճանաչում շերամի սերմի լաւը և վատը, չը գիտէ պահելու և կերակրելու ձևը: Տեղիս ժողովուրդը ամենից շուտ ձգտում է, որ էժան սերմ ձեռք բերի. Նրա համար առանձին նշանակութիւն չունի, թէ սերմը քննված է թէ ոչ. նա գիտէ, որ սերմ վաճառողը որդերը դուրս գալուց՝ ինչ գնով որ լինի՝ պիտի ծախի, և այդ պատճառով ժողովրդի մեծ մասը սպասում է մինչև այն ժամանակ, երբ սերմավաճառը ստիպված է լինում 1 ր. 60 կոպէկանոց սերմը տալ 50 կոպէկով:

Եղել են նոյն իսկ դէպքեր, երբ շատ շատերին հասկացրել են, թէ պէտք է քննված սերմ առնել՝ խոյս տալով չը քննված սերմերից. դրան պատասխանում են՝

— Խուդա վէր սա, բու ախմախ ուրուշդան դա փիլա ալամըզ (եթէ Աստուած տայ, այս փչացած սերմից էլ բոժոժ կը ստանանք):

Ամենագլխաւորն այն է, որ նա չունի սերմի համար պատրաստած առանձին յարմար շինութիւն. Նա տանում պահում է մթին, մաքուր օդից զուրկ, կեղտոտ նեղուածք սենեակում, որտեղ լի են մկները և մրջիւնները, իսկ կերակրում է որդերին՝ ինչպէս պատահում է, երբեմն անձրևով թրջված տերևով, երբեմն չոր:

Շատ պարզ է, որ այդ տեսակ պայմաններում պահելով ստացվում է քիչ և վատ տեսակի բոժոժ և այնքան չեն ստանում, որ կարողանան իրանց արած ծախսը և նեղութեան վարձը ստանալ, և այդ իսկ պատճառով, ժողովրդի մեծագոյն մասը այդ գործի վրա նայում է ինչպէս մի անօգուտ գործի:

Այդ հանգամանքի վրա աւելացրէք նաև մի քանի ֆիրմաների խաբեբայութիւնը, որոնք բերում են վարակված սերմ և հաւատացնում են միամիտներին, թէ ընտիր Բաղդադի սերմ է, էլ չենք ասում, թէ որքան քանակութեան չը քննված сто×сто վարակված սերմեր են բերում լցնում այս կողմերը, որը առնելով խեղճ գիւղացին մի ամսից աւել նեղութիւն է քաշում և ոչինչ չէ ստանում:

Եթէ տեղիս ժողովուրդը գիտակցութեամբ վերաբերվէր դէպի այդ գործը, հասկանար քննվածի և չը քննվածի տարբերութիւնը և թէ շատ ու քիչ ծանօթ լինէր շերամապահական պայմանների և կանոնների հետ, Ֆերգանեան շրջանը շնորհիւ իր բարեբեր և ազատ հողաբաժինների բոժոժի արդիւնաբերութեամբ Ռուսաստանի առաջին տեղը կը բռնէր:

Միմիայն անցեալ տարվանից է, ինչ կառավարութիւնը միջոցներ է ձեռք առել, որ առանց բանդերօլի սերմ չը ծախվի, բայց այդ միջոցները այնքան թոյլ գործադրվեցին այս շրջանում, որ մեծ քանակութեամբ առանց բանդերօլի վարակված սերմեր վաճառվեցին. իսկ քննվածը թանգ լինելու պատճառով մի մասը թափեցին գետը:

Գ. Մանուչարեան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

Կաթողիկոսական ընտրութիւնները մօտենում են, սակայն մեր մամուլն որոշ կերպով չէ կանգնել դեռ եւ թեկնածուների վրա:

Ի զուր ենք հեռու որոնում ընտրելին, ի զուր աչքաթող անում մերայիններին:

Էջմիածնի միաբանութեան մէջ կան պատկառելի անձնաւորութիւններ, որոնք թէ իրանց բարձր ուսումով և թէ վարչական ընդունակութիւններով ամենայն յարմարութիւն ունեն կաթողիկոս դառնալու, սակայն ժողովրդական առածն ասում է՝ «Մոմն իր տակը լոյս չի տայ»:

Ահա ձեզ Կարապետ եպ. Տէր-Մկրտչեան մարդը համալսարանական բարձր կրթութեամբ, լեզուագէտ, հռետոր, լաւ գրող: Յիշենք նրա գրական գործերը յիշենք նրա գործունէութիւնը ճեմարանում, Երևանում, Թաւրիզում: Յիշենք անմոռանալի 1906 թ., երբ Կարապետ եպիսկոպոսը առաջինը համարձակութիւն ունեցաւ կոչ. յայտարարել Էջմիածնի կենտր. համագումար ժողովին: Յիշենք նրա բեղմնաւոր գրական գործունէութիւնը:

Պատւենք այս մարդուն և ընտրենք կաթողիկոս, և հաւատացէք, որ չենք փոշմանի: Աւելացրէք, որ Կարապետ եպիսկոպոսը երիտասարդ է, 45 տարեկան և գործունէութեան վառ հասակով:

Մեր նախնիքը մեզանից ազատամիտ էին. Գրիգոր Լուսաւորիչը կաթողիկոս ձեռնադրվեց 45 տարեկան հասակում, Գրիգոր Պահլաւունին՝ 20 տարեկան, այն ինչ՝ մենք պահանջում ենք, որ կաթողիկոսը զառամեալ լինի:

Սղնախ N. N.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Թիֆլիս քաղաքի զինւորակոչական ատեանը ներկայիս զբաղված է առաջիկայ տարվայ նորակոչ զինւորացուների ցուցակները կազմելով:

✦ Թիֆլիսի նահանգապետ Ս. Ջերնեավսկին՝ Գօրու, Ախալցխայի և Ախալքալաքի գաւառներում կատարած պաշտօնական շրջագայութիւնից յետոյ երկու օր առաջ Թիֆլիս վերադարձաւ:

✦ Ֆինանսների մինիստրը թոյլ է տուել Թիֆլիսի առևտրական բանկին բաժանմունքներ բանալ Գանձակում, Շուշում, Կարսում և Քութայիսում:

✦ Օգոստոսի 8-ին Թիֆլիս վերադարձաւ պետական բանկի Թիֆլիսի ճիւղի կառավարիչ Դ. Բեզօբրազօվը, որը գնացել էր Հին-Ջուղա՝ Պարսկաստանի զեղջատու բանկի տեղական ճիւղի բացման հանդէսին ներկայ գտնվելու համար:

✦ Օգոստոսի 6-ին մի խումբ վրացի ինտելիգենտներ, առաջնորդութեամբ վրաց գիմնազիայի ուսուցիչ և հասարակական-գրական գործիչ Լ. Բօցվաձէի, Թիֆլիսից մեկնեցին Մցխէթ և դիտելով Մցխէթի, Ջվարիի և Արմազի հինաւուրց վանքերը ու նկարելով ուշադրութեան արժանի վայրերը՝ վերադարձան Թիֆլիս:

✦ Հրաժարեցված նօտարիուս Լ. Մզերեանի փոխարէն նշանակվում է Քութայիսի նահանգական դատարանի անդամ Քարթվէլօվը: Լ. Մզերեանը յանձնված է Թիֆլիսի դատաստանական պալատին, մեղադրվելով 129-րդ յօդուածի համաձայն, չը թոյլատրված գրականութիւն պահելուն համար: Նախնական բանտարկութիւնից զերծ մնալու համար, նա դատարանին ներկայացրել է 5,000 րուբլի, իբրև գրաւական:

✦ Զուգդիդի վայրի մօտերքը Ինգուր գետի վրա սկսել են կառուցել երկաթէ նոր կամուրջ, որը կարժենայ 250,000 րուբլի:

✦ Պետական Դումայի անդամ Ց. Սաղթէլեանը Գանձակի նահանգում շրջագայելուց յետոյ Թիֆլիս վերադարձաւ:

✦ Թիֆլիսի տրամվայի վերատեսուչը քաղաքային վարչութեան դրամարկղը մտցրեց 72,000 րուբլի, ծածկելու համար այն գրաւական գումարը, որից դուրս են եկել տուգանքները:

✦ Թիֆլիսի տրամվայի վարչութիւնը մերժեց կօնդուկտօրներին տալ ձմեռվայ հագուստ:

✦ Քաղաքային վարչութիւնը յանձնաբարեց Ս. Միրզոյեանին փորձի համար սալայատակել Նիկօլայեվեան երկու կամուրջների միջև գտնվող տարածութիւնը գրանիտէ նոր ձևի քարերով:

✦ Քաղաքային ինքնավարութեան տնտեսական յանձնախումբը, քննելով վրացի հացթուխների միջնորդութիւնը հացի սակագինը աւելացնելու մասին, որոշեց հացի գինը 4½ կ. բարձրացնել 5 կոպէկի:

✦ Քաղաքային ինքնավարութեան վիճակագրական բիւրօն խնդրեց Թիֆլիսի ոստիկանապետին՝ հաղորդել տեղեկութիւններ հասարակաց կանանց մասին, թէևլով թէ քանի տարեկան հասակում են սկսում անառակութիւնը և մինչև որ տարին շարունակում: Այլև խնդրում է յայտնել նրանց կոչումը, ապրելավայրը ըստ քաղաքամասերի, նաև տեղեկութիւններ հասարակաց տներում և մասնաւոր բնակարաններում ապրողների նկատմամբ:

✦ Երէկ, ամսիս 9-ին, Հալաբարում վախճանվեց 105 տարեկան հասակում Հռիփսիմէ Յարութիւնեանը:

✦ Օգոստոսի 8-ին Սուրամիի քաղաքացուհի Նադեժդա Մէլքուտովան ընդունեց կարբօլեան թթւուտ, կենդանի լինելու նպատակով: Նրա կեանքը վտանգի ենթակայ չէ:

✦ Օգոստոսի 8-ի լուսաբացին կախաղան հանվեց նահանգական բանտի մօտ Իվանէ Քրիստէսիաշվիլին, որին զինւորական դատարանը դատապարտեց մահվան պատժի սպանութիւնների և աւազակութիւնների համար:

✦ Կախէթի իշխանական տոհմերից Իւ. Ճավճավաձէի տանը պահված է եղել մի շատ հազուագիւտ և թանգարժէք հնութիւն: Դա մի աղօթագիրք է և գրված է ձեռքով, գեղեցիկ գրերով: Աղօթագրքի մի թերթի վրա գրված է, որ գիրքը սեփականութիւն է եղել մարտիրոսացած թագուհի Քէթէվանի: Իշխան Իւ. Ճավճավաձէն մտադիր է այս հազուագիւտ ձեռագիրը յանձնել Վրաստանի Պատմա-Ազգագրական Ընկերութեանը՝ պահելու համար:

✦ Վրաց լեզուով, «606» խորագրով ալմանախը, որը վերջերս արգելվեց տպարանել, նահանգապետի կողմից այժմ թոյլատրվել է վաճառահանվել:

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Թեհրանի վաճառականներից կազմվել է մի կօմիտէ, որի նպատակը լինելու է սահմանադրութեան պաշտպանութիւնը:

✦ Բաշիդ-ուս-Սալթանէի յաղթելու առիթով Թեհրանում ստացվել են շնորհաւորական բազմաթիւ հեռագրեր: Ցայտնի պարսկագէտ պրօֆ. Բրօունը Լոնդոնից նոյնպէս ուղարկել է շնորհաւորական հեռագիր: Նա յայտնում է, որ Անգլիայում կազմվել է անգլօ-պարսկական կօմիտէ պարսից սահմանադրութեան պաշտպանութեան համար:

✦ Պարսից խնամակալը ստուարացրել է իր թիկնապահների խումբը 8 յեղափոխականներով:

✦ Թեհրանից հաղորդում են, որ օգոստոսի 4-ին Սավադկուհի մօտ, ամբողջ օրվայ ընթացքում, տեղի է ունեցել կռիւ, որը վերջացել է կառավարական զօրքերի յաղթութեամբ, որոնց կորուստները աննշան են:

✦ Թեհրանում լուր է տարածվել, որ նախկին շահը նաւ նստելու ժամանակ սպանվել է:

✦ Թեհրանի բանտից ազատվել է յայտնի յետադիմական և աւազակ Հաբիբուլահ խանը:

✦ «Իրանը Նօվ» թերթին սպասում է կրկին դադարեցում: Մտադրութիւն կայ, այս լրագրի դադարման դէպքում, հրատարակել նոր թերթ: «Իրանը Նովի» նկատմամբ այս խստութիւնները ծագում են նրանից, որ կառավարութիւնը ուզում է ապացուցել իր անկուսակցութիւնը:

✦ Թիւրքաց մինիստրական կաբինէտի դրութիւնը օրէ-օր ճգնաժամային է դառնում: Արդարադատութեան մինիստրից զատ ընդդիմադիր բանակին յարեցին զինւորական և վակուֆների ու եկեղեցական կալուածների մինիստրները: Այսպիսով մեծ վեզիրի պաշտօնաթողութիւնը անխուսափելի է դառնում:

✦ Ֆրանս-գերմանական բանակցութիւնները մարոկկեան հարցի նկատմամբ ոչ մի եզրակացութեան չեն յանգում: Պարիզի ղեկավար շրջաններում հաւատացնում են, որ մարոկկեան բանակցութիւնների ընթացքը երկիւղ է ներշնչում: Կարող են առաջ գալ լուրջ բարդութիւններ:

✦ Էկս-լէ-Բենում (Ֆրանսիա) ֆրանսիական մի օֆիցէր իջեցրել է գերմանական դրօշակը մի հիւրանոցի վրայից և, փայտը կոտրելով, ոչնչացրել է դրօշակը, վաստակելով հասարակութեան կողմից բուռն ծափեր:

✦ Լոնդոնի գործադուլարար բանւորների ներկայացուցիչները որոշել են գործադուլը չը դադարեցնել՝ մինչև որ նաւաշինարանների տէրերը չը վերացնեն Լիվերպուլի լօկաուտը:

✦ «Neue-Freie-Presse» թերթը հաղորդում է, որ ռուսաց արտաքին գործերի մինիստր Ս. Սազօնօվը սեպտեմբերին կերթայ Պետերբուրգ:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

8 օգոստոսի

ՆՕՎՕԶԵՐԿԱՍԿ: Պօնօմարեվ գիւղում գազանաբար մորթել են վեց հոգուց բաղկացած մի գիւղական ընտանիքի:

ԼՕՁ: Դիւղաչի դեղատանը անզգոյշ վարվելով կրակի հետ առաջացաւ բենզինի պայթում, որից և հրդեհ ծագեց: Պայթումի ոյժից վիրաւորվեցին մահացու կերպով դեղատան տէրը և սպաւորներից մինը: Կրկնակի պայթումից վիրաւորվեցին պրիստաւ Լէվիցկին, հրդեհաշէջների աւագ Կազանօվիչը և երկու հրդեհաշէջներ:

ՄՕՍԿՎԱ: Մօսկվայի նահանգական զէմստվային վարչութեան նախագահը, իր աղջկայ հետ կալուածքը վերադառնալու ժամանակ, ենթարկվեց գիշերային կողոպտիչների յարձակման, որոնք տարան արժէքաւոր իրերը և պորտֆէլը թղթերով: Վերջինները խոստացան ուղարկել պօստով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: 1912 թւին հողային բարեկարգութեան համար յատկացված է 6,500,000 րուբլի:

ԱՍՏՐԱԽԱՆ: Մի շաբաթում քաղաքում և գաւառում խօլերայով հիւանդացան 62, մեռան 27 հոգի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Եկաւ Կօննաուտի պրինցը:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթեւեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ արագ № 2 գնացքը՝ 9 ժ. 38 ր. առաւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բագու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.: **Պօստատար № 4 գնացքը՝** 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 8 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 3 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.: **Մարդատար № 6 գնացքը՝** 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ. 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր.՝ Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.: **Խառն գնացքը՝** IV կարգի վագօններով ըստ հարկի կարեւորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր., Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 44 ր. առ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար № 74/75՝ 1 ժ. գիշ. Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրօպօլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար. 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երևան մտնելու): Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղևորվում է Երևան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երևան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ: **Մարդատար-ապրանքատար № 78/79 գնացքը՝** 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ, Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 9 ժ. 45 ր. առաւ., Երևան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և արանից դէպի այլևս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ արագ. № 1 գնացքը՝ 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ: **Պօստատար № 3 գնացքը՝** 10 ժ. 47 ր. առ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում՝ 12 ժ. 35 ր. գիշ.: **Մարդատար № 5 գնացքը՝** 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 27 ր., երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.: **Խառն գնացքը** IV կարգի վագօններով ըստ հարկի կարեւորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան:

ԲՈՐԺՕՄ՝ մարդատար № 7/8 գնացքը՝ 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բօրժօմ՝ 1 ժ. 38 ր. ցերեկ.: **Մարդատար № 9/10 գնացքը՝** 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բօրժօմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ մարդատար № 5 գնացքը՝ 4 ժ. 25 ր. գիշեր.: **Պօստատար № 3 գնացքը՝** 9 ժ. 52 ր. առ.: **Արագ № 1 գնացքը՝** 10 ժ. 24 ր. երեկ.: **Խառն գնացքը** IV կարգի վագօններով ըստ հարկի կարեւորութեան 7 ժ. 38 առաւօտ. **Մարդատար-ապրանքատար № 80/81** գնացքը՝ 1 ժ. 26 ր. գիշերը:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ արագ № 2 գնացքը՝ 8 ժ. 52 ր. առաւօտ.: **Պօստատար № 4 գնացքը՝** 11 ժ. 40 ր. գիշ.: **Մարդատար № 6 գնացքը՝** 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագօններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ:

ԲՈՐԺՕՄԻՑ՝ Մարդատար № 9/10 գնացքը՝ 9 ժ. 28 ր. գիշ.: **Մարդատար № 7/8 գնացքը՝** 7 ժ. 18 ր. առաւօտեան:

Ծանօթութիւն.—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բագու՝ և № 1 Բագու-Թիֆլիս) առանց վագօնը փոփոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բագու-Ռօստով, միայն վճարելով պլացկարտի գինը:

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վէլեամինօվսկայա փողոց, № 8.
(Կ. Հ.) 416. 100—30

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՕՍԿՎԱՅԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ բնագիտական մասը աւարտած ՀԱՅՈՒՀԻ փնտռում է ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆ հայոց դպրոցներում: Համաձայն է գնալ Թիւրքիա: Դիմել մինչև օգոստոսի 25-ը կարելի է այս հասցէով. Вешняки. Казанская жел. дор., Дача Тупициной, Т. Шамкорьяну.
(Հ.) 775. 2—1

ԱՄՈՒՍԻՆՆԵՐ
ՃԵՄԱՐԱՆԱՒԱՐՏ
ԵՒ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒՀԻ-ՎԱՐԺՈՒՀԻ
ՈՐՈՆՈՒՄ ԵՆ ՊԱՇՏՕՆ
ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ
Պայմանների մասին դիմել «Մշակի» գրասենեակին:
(Հ. ու. Կ.) 778. 8—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է
1500 ՌՈՒԲԼԻ
վստահելի երաշխաւորութեամբ:
Պայմաններն ուղղել՝ Тифлисъ, почтовый ящикъ № 27.
777. 2—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՊԱՏԱՆԻ ԱԼՄԱՆԱԽԻ I (III)
ԳԻՐՔԸ և ուղարկվեց բաժանորդներին
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — 1) «Առաջաբան», խմբ., 2) «Անիրաւ աշխարհ», Արսէն-Երկաթ, 3) «Մուրացիկ կնոջ» (բանաստ.), Խ. Բուբեան, 4) «Սարերի արքան» (բանաստ.), Սիմ. Համալեան, 5) «Գարնան փափագով», Մ. Էփրիկ, 6) «Տրտունջ» (բանաստեղծութիւն), Ռէն, 7) «Այն գիշեր» (պատկեր), Յակ. Տէրունի, 8) «Լուսագէմին», Լեռ, 9) «Պանդուխտի վերադարձը» (բանաստ.), Գ. Մխիթարեան, 10) «Հօրեղբօրս պատմութիւնը», Տիրոս, 11) «Մինիատիւր», Գ. Դարդունի, 12) «Երգիչը», Վահան Երեմեան, 13) «Անցած օրեր» (բանաստ.) Մ. Լօռեցեան, 14) «Ռուբէնս» (պիէս 2 գործ. և 4 պատկ.), Արտ. Թումանեան, 15) «Շերվանզադէ», 16) «Լալազար Աղաեան», Պատրիկ, 17) «Փաստ», 18) Ծաղկաքաղ թարգմանութիւններ.
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին:
Օգոստ. 15-ից բաժանորդներին II (IV) գիրքը
ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 6 գրքի բաժանորդագրութիւնը Թիֆլիսում 1 ր., գաւառ 1 ր. 25 կ., արտասահման 5 ֆր. Հասցէն Тифлисъ, Сурпъ-Минасскій пер., 26. Мисаку Эприкяну.
(Հ.) 776. 3—1

Утвержденные Министерств. Торговли и Промышленности
ТОРГОВАЯ ШКОЛА
СЪ ПРАВАМИ ПРАВИТЕЛЬСТВЕН. СРЕДНИХЪ УЧЕБНЫХЪ ЗАВЕДЕНІЙ
И
БУХГАЛТЕРСКІЕ КУРСЫ
ДЛЯ ЛИЦЪ ОБОЕГО ПОЛА
А. И. ТЕРЪ-КАСПАРОВА
Баку, уголъ Красноводской и Меркурьевской. Телефонъ № 10—56.
ШКОЛА и КУРСЫ даютъ полную теоретическую и практическую подготовку къ бухгалтерской и прочей дѣятельности въ торгово-промышлен. и иныхъ учрежденіяхъ.
Полный курсъ въ школѣ три года, на курсахъ 6—8 мѣсяцевъ.
Пріемъ въ младшій приготовительный и первый классы ШКОЛЫ съ 20 Августа, НА КУРСЫ съ 1 Сентября ежедневно.
Представившія свидѣтельства объ окончаніи 2-хъ классн. сельск. училищъ, 4-хъ классовъ городскихъ училищъ и перваго класса среднихъ учебнихъ заведеній принимаются въ первый классъ ШКОЛЫ безъ экзамена.
Подробныя свѣдѣнія о ШКОЛѢ и КУРСАХЪ выдаются и высылаются безплатно.
(Հ. Կ.) 709. 20—10

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն:
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ:
Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster. Comptoir-ում: Նիւթերն առնվում են բէալ կեանքից: Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մաքսային կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումը). բ) ոչ պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) ապրանքագիտութիւն. 3) գրամեքենագրութիւն (ռեմինգտոն և ուր.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով: Պարապմունքները կատարվում են և զատ-զատ: Բացվում է կանանց յատուկ բաժանմունք: Ունկնդիրների թիւը սահմանափակված է: Պարապմունքները սկսվում սեպտ. 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը սեպտ. 1-ից առ. 10—12 և եր. 4—7 ժամ: Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքերում:
(Հ.ու.Կ.) 738. 0—7 Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.